

ISSN 1829-1155

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑՍՄԱՆԱԳՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՐՍԱՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Խմբագրական
խորհուրդ՝

Գաղփել Հարությունյան
Արմեն Նարությունյան
Վահե Միքայանյան
Վորոջյա Հովհաննիսյան
Վազերի Քորույան
Ռաֆիկ Պապյան
Առուշան Նամրյան

Գլխավոր խմբագիր՝
Գոհար Աշոտինի

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71

ՏԵՂԵԿԱԳԻՐ

4(53)
2009

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՎԵՐԼՈՒԾՎԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- * ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳԵՐՍԱՄԻԱՅԻ ԴԱԾՆԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱԾՆԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԴԻՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ – գ. ՀՈՎԱՆԻԿԱՅԱՆ 4
- * ՀՀ ՍԴ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅԱՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԱՊԱՏԱԿԱՆ
ՃԱՆԱԳԵԼՈՒ ՍԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀՈՇՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՆՈՆՆԱԳՐՈՒԹՅԱՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԱՊԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ – և ՄԱՆԱՅԱՆ 16

II. ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (768-781)

- * ՄԴՈ-768. 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԴՈՒԾԱՆՔԵՈՒՄ ՍՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՎՎԱՆԱԳՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՊԱՅԱՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՈԱԽԱՏԱՆԿԵՄԱԿԱՆ ՀԱՍԱԳՈՐԾՎԱՅՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱԿՈՒՄ ԳՈՂԱԶԴԱՅԻՆ-ՅՈՒՅԱՎԱՌԴԵՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ ՓՈԽ ԳՈՐԾՎԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՀԱՍԱԳԱՅԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐՄԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԱՍՄԱՊԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 26
- * ՄԴՈ-769. 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԴՈՒԾԱՆՔԵՈՒՄ ՍՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՎՎԱՆԱԳՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՊԱՅԱՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՊԱՀ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԻՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՅՆԵՐԻ
ՍԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԱՐՏՈՆԵՅԱԼ ՊԱՅԱՄԱՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ ՀԱՍԱԳԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐՄԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 29
- * ՄԴՈ-770. 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԴՈՒԾԱՆՔԵՈՒՄ ՍՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՎՎԱՆԱԳՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՊԱՅԱՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՎՎԱՆԱԳՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԱՊԱՐԳԻ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՅՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՄԱՊԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄՆ ՍԱՍԻՆ ՀԱՍԱԳԱՅԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐՄԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԱՍՄԱՊԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 33
- * ՄԴՈ-771. 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԴՈՒԾԱՆՔԵՈՒՄ ՍՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՎՎԱՆԱԳՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՊԱՅԱՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՀԱՍԱԳԱՅԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐՄԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԱՍՄԱՊԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 36
- * ՄԴՈ-772. 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԴՈՒԾԱՆՔԵՈՒՄ ՍՈՐԱԳՐՎԱԾ՝
«1992 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՆ 15-Ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՎՎԱՆԱԳՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ
ՊԱՅԱՄԱՆԱԳՐԻ ՍԱՄՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՈԱԽԱՏԱՆԿԵՄԱԿԱՆ
ՀԱՍԱԳՈՐԾՎԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՍԻՆ» ՀԱՍԱԳԱՅՆԱԳՐԻ
ԾՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՎՈՂ ՈԱԽԱՏԱՆԿԵՄԱԿԱՆ ՆԵՐԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆ ՆԿԱՏՄԱՐ ՀԱԿՈՒՄՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ
ԿԱՐԳԻ ՍԱՍԻՆ» ՊՐԵՍՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄԿԱՏԱՐԵԼՈՒ ՍԱՍԻՆ ԵՐԿՐՈՐԴ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՐՄԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 39
- * ՄԴՈ-773. 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԴՈՒԾԱՆՔԵՈՒՄ ՍՈՐԱԳՐՎԱԾ՝
«2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՎՎԱՆԱԳՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ
ՊԱՅԱՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻճակի ՍԱՄԻՆ»
ՀԱՍԱԳԱՅԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՍԱՍԻՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՐՄԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 42

* ՍՊԸ-774. 2007 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ին ԴՈՒՇԱՆԲԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «1992 թվականի ՄԱՅԻՍԻ 15-ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆՎՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋԵՎ ՈԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՍՏԱԳՈՐԾՎԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՂԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՎԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 45
* ՍՊԸ-775. 2007 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ին ԴՈՒՇԱՆԲԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆՎՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԳՐԵՍԻՎԻՑ ՄՊԱՄԱՆՀԻՔ ԱՄՊԱՅՑՄԱՆ ԿԱՄԱԳՐԵՍԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍՄԱՆ ԴԵՊՈՒՄ ՈԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 48
* ՍՊԸ-776. 2006 թվականի ՀՈԿՏՎԱՐԻ 12-ին ԱՍՏԱՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՎԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 51
* ՍՊԸ-777. 2007 թվականի ՀՈԿՏՎԱՐԻ 27-ին ԲԲՅՈՒՏԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՅՈՒՏ ԿՈՂՄԻՑ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՅԱՆԱԳՐԻՆ ԲՈՒՂԱՐԻԱՅԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՈՒՆԻՆԻԱՅԻ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 54
* ՍՊԸ-778. 2008 թվականի ՓԵՏՏՎԱՐԻ 7-ին՝ ԲԲՅՈՒՏԵԼՈՒՄ ԵՎ 2008 թվականի ՀՈԿԼԻՄԻ 7-ին ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՍՏԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԵՋԵՎ՝ «ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ԱՆՎԱՆՎՈՒԹՅԱՆ 2007 թվականի ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ՝ ՍԱՍ II» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՅՆՎԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 57
* ՍՊԸ-779. 2007 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ին ԴՈՒՇԱՆԲԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎԱՆՎՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՈԱԶՄԱՏԵԽՆԱԿԱՆ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄՏԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՎՅ ՊԱՀՏՈՒՄՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 60
* ՍՊԸ-780. ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԱՄ ԾԱՎՈՒՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՈՒՄ ՎՐԱ՝ ՀԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԻ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 26-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ, «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐՏԵՔԻ ՀԱՄԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 115-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 118-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 63
* ՍՊԸ-781. 2008 թվականի ՀՈԿՏՎԱՐԻ 13-ին՝ ԲԲՅՈՒՏԵԼՈՒՄ ԵՎ 2008 թվականի 04ՈՍՈՍԻ 8-ին ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՍՏԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԵՋԵՎ՝ «ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ» 2007/019-124 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՍՏԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՊԱՏԱՍԽԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 84
III. ՏԵՂԵԿԱՑՎՈՒԹՅՈՒՆ
* ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԵԶԱՋՎԱՅԻՆ ՏԱՄՈՒՐՄԵՐՈՐԴ ԽՈՐՃՈՒԺՈՂՈՎՐԾ 88
* ՀԵՐԹԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԸ GTZ-Ի ՀԵՏ ՀԱՍՏԵԴ 92
* ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 94



ԵՐԻՍԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ

Գոր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ՍԴ իրավախորհրդականական
ծառայության փորձագիրական-վերլուծական
բաժնի գլխավոր մասնագետ

**ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՇՆԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Ժամանակակից սահմանադրություններն այսօր, որպես կանոն, բովանդակում են մարդու արժանապատվությունը հարգելու և պաշտպանելու՝ պետական իշխանության ուղղված հանձնարարական¹: Այդ հանձնարարականը պատկանում է առաջնային սահմանադրական սկզբունքների թվին, որոնք պայմանավորում են սահմանադրության բոլոր մյուս դրույթները: Մարդու արժանապատվությունը սահմանադրության բարձրագույն բարիքն է²: Այն սահմանադրության արժեհամակարգի առանցքն է³և բոլոր հիմնական իրավունքների հիմքը, որոնք իրենց հերթին կոնկրետացնում են մարդու արժանապատվության սկզբունքը⁴: Ընդ որում, սահմանադրությամբ ամրագրված յուրաքանչյուր հիմնական իրավունքն ամփոփված մարդու արժանապատվության բովանդակությունը պետք է լինի սահմանադրական փոփոխությունների միջոցով հիմնական իրավունքների սահմանափակման **միակ** մասշտաբը⁵:

Նկատի ունենալով մարդու արժանապատվության վերաբերյալ սահմանադրական դրույթի առանձնահատուկ կարևորությունը յուրաքանչյուր սահմանադրական պետության իրավական կյանքում և հաշվի առնելով մարդու արժանապատվության հասկացության իրավական

1 Տե՛ս, օրինակ, Ըվեյցարիայի Դաշնային սահմանադրության 7-րդ հոդվածը, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքի 1-ին հոդվածի առաջն մասը, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի առաջն մասը և 14-րդ հոդվածը:

2 Տե՛ս Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային սահմանադրական դատարանի ԴՍԴՌ 32, 98 (108); 50, 166 (175); 54, 341 (357) դրույթները: Դաշնային սահմանադրական դատարանի՝ սույն հոդվածում վկայակրչվող բոլոր դրույթները վերցված են նույն պաշտոնական իմանեթնետային կայքից՝ www.bundesverfassungsgericht.de/entscheidungen.html:

3 ԴՍԴՌ 35, 202 (225); 39, 1 (43):

4 ԴՍԴՌ 93, 266 (293); 107, 275 (284):

5 ԴՍԴՌ 109, 279 (310):

մեկնաբանման հարցում Գերմանիայի Դաշնային Հանրապետության (ԳԴՀ) Դաշնային սահմանադրական դատարանի (ԴՍԴ) չափազանց հետաքրքիր, հարուստ և մեզ համար խիստ ուսանելի փորձը՝ սույն հողվածում ներկայացվում են նրա հիմնարար իրավական դիրքորոշումները տվյալ հարցի վերաբերյալ: Հոդվածը շարադրված է հիմնական իրավունքների ստուգման՝ Դաշնային սահմանադրական դատարանի պրակտիկայում ընդունված եռաստիճան մեթոդին համապատասխան (պաշտպանության ոլորտ, միջամբություն, սահմանադրահրավակական արդարացում):

I. Մարդու արժանապատվության հասկացությունն ըստ ԴՍԴ-ի

ԴՍԴ-ն մարդու արժանապատվության հասկացությունն ըմբռնում է իբրև առաջատար սահմանադրական սկզբունք հիմնական իրավունքների համակարգում: Մարդու արժանապատվության դեմ ոտնձգությունների համար նա սկզբում «նվաստացում, խարանում, հետապնդում, հալածանք» ձևակերպումներն եք գտել⁶: Հետագայում նա տվեց այսպես կոչված **օբյեկտի բանաձեռ**, ըստ որի՝ մարդու արժանապատվությանն անհարիր է մարդուն «պեսպության սուլ օբյեկտ» դարձնելը⁷.

«Դրա հետ է կապված մարդու հասարակական արժեվորման ու հարգման պահանջը, որն արգելում է մարդուն դարձնել **պեսպության սուլ օբյեկտ** կամ նրան այնպիսի վերաբերությունը արժանացնել, որն սկզբունքորեն հարցականի գրակ կղճի սուրյեկտ լինելու նրա հավելանիշը: Մարդու արժանապատվությունն այս իմաստով ոչ միայն համապարասիան անձի անհավական արժանապատվությունն է, այլև մարդու՝ իբրև գրված կրեսակի էակի արժանապարփությունը: Յուրաքանչյուր ոք այն ունի անկախ իր հավելանիշներից, չեռքբերումներից ու սոցիալական վիճակից: Այն հավույլ է նաև նրան, ով իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակի պարզաբնուվ չի կարող դրսնորել իմաստավորված վարքագիծ: Նոյնիսկ «ոչ արժանապարփ» վարքի պարզաբնուվ այն չի կորչում: Այն չի կարող խլվել ոչ մի մարդուց՝ սակայն կարող, է խախտվել նրանից բխող հարգման պահանջի իրավունքը»⁸:

Գործ 1.

Բ-ն պարկանում է այն անձանց թվին, ովքեր իրենց արդարին սեռական հավելանիշներով ծննդյան պահին պարկանում են արական սեռին, սակայն ցանկացած առումով իրենց զգում են իբրև իգական սեռի ներկայացուցիչ (արա-

6 ԴՍԴ 1, 97 (104):

7 ԴՍԴ 87, 209 (228); 109, 133 (149f.), 115, 118 (153):

8 ԴՍԴ 87, 209 (228):

ՎԵՐԼՈՒԾՎԱԾՆ ԽՅՈՒԹԵՐ

կան դրանսանքուսալներ): Հաջողված վիրահարական սեռափոխությունից հետո Բ-ն պահանջում է ծնունդների գրանցամարյանում փոխել իր սեռի վերաբերյալ՝ «արականից» «իգականի», իմշը սակայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից մերժվում է⁹:

Այսպիսով, մերժվում է Բ-ի հաջող սեռափոխության իրավական ճանաչումը: Դրա հետեւանքն այն է, որ նրա այժմյան սեռի և պաշտոնական գրանցման միջև հակասություն կա, իմշը կարող է Բ-ին ցանկացած ժամանակ, օրինակ՝ անձի սպուզման դեպքում, զցել իր հասարակական հարգման պահանջը խախորո իրավիճակի մեջ: Այդ պատճառով ԳՍԴ-ն իրավացիորեն ճանաչում է նրա արժանապարփության խախորման փաստը և (հակառակ Դաշնային գերազույն դադարանի), առանց օրենքի նախնական փոփոխության, հասարակում գրանցումը փոփոխելու պահանջի իրավունքը¹⁰:

II. Մարդու արժանապատվության՝ հիմնական իրավունքի որակը

Գերմանիայի իրավաբանական գրականության մեջ մինչ օրս վիճելի է այն հարցը, թե արդյոք ԳԴՀ Հիմնական Օրենքի (ՀՕ) 1-ին հոդվածի առաջին մասը¹¹ ինքնուրույն հիմնական իրավունք կարող է համարվել: Հոչակագրային անորոշության պատճառով ոմանք այն տեսակետն են պաշտպանում, որ մարդու արժանապատվությունը հիմնական իրավունք չէ¹²: Այնուամենայնիվ մասնագետների ճնշող մեծամասնությունը հաստատական պատասխան է տալիս տվյալ հարցին՝ փաստարկելով իր պնդումն այն բացառիկ կարևոր նշանակությամբ, որն ունի մարդու արժանապատվությունը¹³: ԳՍԴ-ն ևս հետևում է այս կարծիքին՝ հիմուրյան ընդհատման վերաբերյալ իր առաջին որոշման մեջ տալով հետևյալ ձևակերպումը.

«Մարդկային կյանքը ... մարդու արժանապարփության կենսական հիմքն է և մնացած բոլոր հիմնական իրավունքների նախապայմանը»¹⁴:

Այսպիսով, ՀՕ 1-ին հոդվածը պարունակում է հիմնական իրավունք, նույնիսկ եթե այն նշվի նաև որպես «առաջատար սահմանադրական սկզբունք»¹⁵, «պետական լեզվիմության նորմ»¹⁶, «սահմանադրական պետության արքիմելյան կետ»¹⁷ կամ սահմանադրության բարձրագույն իրավական արժեքը¹⁸: Այս հասկացական տարբերակումներն ընդգծում են մի-

9 ԳՍԴ-Ռ 49, 286:

10 ԳՍԴ-Ռ 49, 286 (301 f.): Դրա հիման վրա 10.09.1980թ. ընդունվում է Տրանսեքսուալների մասին օրենքը, որը բույսառում է փոփոխություն կատարել քաղաքացիական կացության ակտերի գրանցամասնությունը:

11 ԳԴՀ ՀՕ 1-ին հոդվածի առաջին մասը սահմանում է. «Մարդու արժանապատվությունն անձեռնմխելի է: Այն հարգելու ու պաշտպանելու անդրոց պետական իշխանության պարտականությունն է»:

12 Marten/Papier (Hrsg.): Handbuch der Grundrechte in Deutschland und Europa, Bd. I, 2004, S. 60ff; Dreier (Hrsg.): Grundgesetz-Kommentar, Bd. I, 2008, Art. 1 Rdnr. 127.

13 Hufen, NJW 1999, S. 1504; Kunig, in: von Münch/Kunig (Hrsg.): Grundgesetz-Kommentar, Bd. I, 2000, Art. 1 Rdnr. 3.

14 ԳՍԴ-Ռ 39, 1 (42):

15 ԳՍԴ-Ռ 6, 32 (36, 41); 45, 187 (227):

16 Sachs (Hrsg.): Grundgesetz-Kommentar, München 2009, Art. 1 Rdnr. 43.

17 Haverkate: Verfassungslehre, 1992, S. 142. Սեղմանու ըստ Ipsen: Staatsrecht II, Grundrechte, Köln 2007, S. 59.

18 Dreier (Hrsg.): Grundgesetz-Kommentar, Bd. I, Art. 1 Rdnr. 40.

այն մարդու արժանապատվության ակնառու նշանակությունը: Հակառակ զրականության մեջ դեռևս արտահայտվող կասկածների¹⁹՝ պետք է շանադրաբար պնդել, որ մարդու արժանապատվության վերաբերյալ սահմանադրական դրույթը ոչ միայն օբյեկտիվ իրավունք է, այլև, ինչպես մյուս բոլոր հիմնական իրավունքները, ունի **սուբյեկտիվ հանրային իրավունքի** որակ²⁰: Պրոֆ. Շմիդտի կարծիքով՝ մարդու արժանապատվության՝ հիմնական իրավունքի բնույթի մասին հարցը կարող է նաև անպատասխան մնալ, քանի որ առանց այդ էլ մարդու արժանապատվության ապահովմամբ է տողորված բոլոր հիմնական իրավունքների գործողությունը: Եթե որևէ պետական մարմին խախտում է մի որևէ (հասուկ) հիմնական իրավունք, ապա դրա հետևանքով կարող է խախտվել նաև մարդու արժանապատվության վերաբերյալ սահմանադրական նորմը²¹:

III. Հիմնական իրավունքի կրողները

Յանկացած մարդկային կյանքի իյանքի ի սկզբանե հասուկ է արժանապատվությունը²²: Քանի որ մարդու արժանապատվությունն անձնութեալի է, ուրեմն **յուրաքանչյուր մարդ** այդ հիմնական իրավունքի կրողն է: Այս հարցում գիտնականների կարծիքները միասնական են²³, ինչը զարմանալի չէ, որովհետև մարդու արժանապատվության տեսանկյունից մարդկանց միջև ցանկացած տարրերակում միանգամից կխախտի այն²⁴:

Հիմնական իրավունքի կրողներ են նաև **փորրահասակ երեխաները**²⁵, **հոգեկան հիվանդները**²⁶, **օպարերկրացիները**, **հանցագործները**²⁷ և այլն: Մարդու արժանապատվությունը պարզապես համապատասխան անձի անհատական արժանապատվությունը չէ: Այն պատկանում է յուրաքանչյուր մարդկային էակի հավասարաչափ՝ անկախ նրա հատկանիշներից, ունակություններից, ազգությունից²⁸, ծագումից և սոցիալական դրույթունից²⁹:

ԴՍԴ-ն հետևում է այն տեսակետին, որ **չծնված կյանքին** (nasciturus) ևս հասուկ է արժանապատվությունը, և դա ծնակերպել է հետևյալ անառկելի նախադասությամբ.

19 Նոյյն տեղում, Rdnr. 124.

20 Այսպիս են կարծում *Sachs* (Hrsg.): GrundgesetzKommentar, Art. 1 Rdnr. 3ff; *Kunig*, in: von Münch/ *Kunig* (Hrsg.): GrundgesetzKommentar, Art. 1 Rdnr. 3; *Stern*: Das Staatsrecht der Bundesrepublik Deutschland, Bd. III, 1994, S. 26f.

21 *Schmidt*: Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, Grasberg bei Bremen 2008, S. 96.

22 ԴՍԴ 39, 1 (41); 87, 209 (228).

23 ԴՍԴ 87, 209 (228): *Dreier* (Hrsg.): Grundgesetz, Bd. I, Art. 1 Rdnr. 64; *Stern*: Staatsrecht III, S. 61.

24 *Ipsen*: Staatsrecht II, Grundrechte, S. 57.

25 ԴՍԴ 57, 361 (382); 79, 51 (62):

26 Բավարիայի Սահմանադրական դատարանի թիվ 10, 101 որոշումը:

27 ԴՍԴ 72, 105 (115); 109, 133 (150); 117, 71 (89):

28 ԴՍԴ 50, 166 (175):

29 ԴՍԴ 39, 1 (41); 87, 209 (228):

ԳԵՐԼՈՒԾՎԱՆ ՆՅՈՒԹԵՐ

«Որպես գոյություն ունի մարդկային կյանք, նրան հայրուկ է արժանապատվությունը. վճռորոշ նշանակություն չունի, թե դրա կրողը զիկակցում է արդյոք իր արժանապատվությունը և կարող է արդյոք անձամբ պաշտպանել այն»³⁰:

Հղիության ընդհատման վերաբերյալ իր երկու որոշումներում³¹ էլ ԴՍԴ-ն անպատասխան է թողել այն հարցը, թե արդյոք nasciturusն օժտված է իրավունակությամբ, թե իմնական իրավունքներ կրելու հատկանիշի բացակայության պատճառով «միայն» պետության՝ պաշտպանության օբյեկտիվ պարտականության միջոցով է պաշտպանվում նրա կյանքի իրավունքը, որովհետև իմնական իրավունքների նորմերը բովանդակում են ոչ միայն ընդդեմ պետության անհատի ինքնապաշտպանության սուրյեկտիվ իրավունքներ, այլև նրանք միաժամանակ մարմնավորում են մի օբյեկտիվ արժեհամակարգ, որով կաշկանդված է ամբողջ պետական իշխանությունը: Բոլոր դեպքերում nasciturusը գտնվում է մարդու արժանապատվության վերաբերյալ սահմանադրական դրույթի օբյեկտիվ-իրավական պաշտպանության ներքո՝ բեղմնավորման 14-րդ օրվանից սկսած³²:

Որոշ գիտնականների գնահատմամբ՝ ԴՍԴ-ի կողմից կյանքի ու արժանապատվության հավասարեցումը համոզիչ չէ: Ըստ պրոֆ. Իպսենի, եթե մարդու արժանապատվությունն ըմբռնենք իրեն հասարակականիքի պահանջ, ապա դրա նախապայմանը, ըստ տրամաբանության, մարդու ծնված լինելն է: Բացի այդ, նրա կարծիքով, ԴՍԴ-ն խճճվում է անլուծելի հակասության մեջ, եթե մի կողմից թույլատրելի է համարում ծնված երեխային կյանքից զրկելը նաև առանց բժշկական ցուցումների³³, մյուս կողմից այդ նույն չծնված երեխային «անձեռնմխելի» մարդկային արժանապատվության կրող է համարում³⁴: Հետևաբար, հակառակ տարածված կարծիքի³⁵, nasciturus-ը տվյալ հիմնական իրավունքի կրող չէ³⁶:

Իրեն սուրյեկտիվ իրավունք՝ մարդու արժանապատվության հիմնական իրավունքն անհրաժեշտաբար դադարում է մարդու մահվանը:³⁷ Իրավասությեկտությունից, որը մահացածների մոտ իհարկել բացակայում է³⁷, պետք է տարբերել այն հարցը, թե արդյոք նրանք օժտված են մարդ-

30 ԴՍԴ 39, 1 (41):

31 ԴՍԴ 39, 1ff.; 88, 203ff.

32 ԴՍԴ 39, 1 (37):

33 ԴՍԴ 39, 1 (49); 88, 203 (254):

34 Ipsen: Staatsrecht II, Grundrechte, S. 57; Տվյալ հարցին բնադրատարար է մոտենում նաև պրոֆ. Դրայերը՝ Dreier (Hrsg.): Grundgesetz-Kommentar, Bd. I, Art. 1 Rdnr. 66.

35 ԴՍԴ 39, 1 (41); 88, 203 (254); Sachs (Hrsg.): Grundgesetz-Kommentar, Art. 1 Rdnr. 51; Kunig, in: von Münch/Kunig (Hrsg.): Grundgesetz-Kommentar, Art. 1 Rdnr. 14.

36 Համոզիչ փաստարկներ ունեն Dreieler (Hrsg.): Grundgesetz-Kommentar, Bd. I, Art. 1 Rdnr. 66ff.

37 Որպանվ ծանոր եմ, մահացածի իրավասությեկտության վերաբերյալ պնդումը ոչ մի գիտնականի կողմից չի պաշտպանվում: Խնդրահարույց է անշուշտ Kunig, in: von Münch/Kunig (Hrsg.): Grundgesetz-Kommentar, Art. 1 Rdnr. 15: «Ժամանակագործությունը կատարվում է անհանդաց պահանջման դրույթում»:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

կանց կողմից հարգանքի ենթակա արժանապատվությամբ: Վերջինս հաստատվում է զիտնականների մեծամասնության կողմից³⁸, ինչը, իր հերթին, հաստատում է այն պնդումը, որ պետք է *սուբյեկտիլ իրավունքը* տարրերել իրավական արժեքից³⁹:

Ըստ ԴԱԴ Մեֆիստո - որոշման՝ հարգման պահանջի իրավունքը գործում է նաև իրավունքի կրողի մահից հետո⁴⁰: Մարդու արժանապատվության անխախտելիության պահանջի հետ անհամատեղելի կլիներ, եթե բույլատրելի լիներ մարդուն, որին հատուկ է արժանապատվությունը անձ լինելու փաստի ուժով, նրա մահից հետո նվաստացնել ու ստորացնել: Հարգման պահանջի իրավունքի պաշտպանության պահանջ կարող են ներկայացնել մահացածի հարազատները⁴¹:

Իրավաբանական անձինք, ինչպես նաև մարդկանց խմբերը, որպես այդպիսին, չեն գտնվում մարդու արժանապատվության պաշտպանության ոլորտում⁴²: Պրոֆ. Զիլբերկուհը, հիմնվելով Դաշնային վարչական դատարանի որոշումների վրա⁴³, գտնում է, որ նաև մարդկանց խումբը, օրինակ՝ Գերմանիայում ապրող հրեաները, կարող են լինել մարդու արժանապատվության սահմանադրական դրույթի պաշտպանության օբյեկտ⁴⁴:

IV. Հասարակական արժեվորման ու հարգանքի պահանջը

Մարդու արժանապատվության ուժով անհատն օժտված է հասարակության մեջ հասարակական արժեվորման ու հարգանքի պահանջի իրավունքով⁴⁵: Ցուրաքանչյուր ոք պետք է հասարակության մեջ ճանաչվի իրեն իր սեփական արժեքն ունեցող սկզբունքորեն իրավահավասար և իր

38 Dreier (Hrsg.): Grundgesetz-Kommentar, Bd. I, Art. 1 Rdnr. 72; Sachs (Hrsg.): Grundgesetz-Kommentar, Art. 1 Rdnr. 53ff.

39 Հիմնական իրավունքներով պաշտպանված **իրավական արժեքի** և **հիմնական իրավունքի**, այսինքն՝ (մարդկային) ազատության և (սահմանադրամիավայրական) ազատության իրավունքի տարրերավունք ունի ուրաքանչյուր:

40 Քանի որ ազատությունը՝ որպես հիմնական իրավունքների պաշտպանության արժեք, ոչ թե **պրոլուծ է** պետության կողմից, այլ **երաշխափորվում** է հիմնական իրավունքներով (իրեն սույն պարագաներով), որպես անհրաժեշտարար բնույթ է, որ իրավական առունելի բույլատրումը է այն ասեն, ինչն իրավունքի նորմը կատեգորիկ **արգելված չէ**: ԴԱԴ-ն ստիպված էր իր որոշմանը հաստատել այս պնդումը (ԴԱԴ 84, 372 (380)՝ «Ինչն արգելված չէ, բույլատրում է»), քանի որ այն հիմնական իրավունքների սուսունքուն մինչ այդ ինքնին հասկանալի բան չլի: Կարծ ասած՝ ոչ թե բարացու գործելու պաստուրունք, այլ պետության կողմից դրս սահմանափակումը կարդ ունի լիազորության:

42 Հակառակ տարածված բառագործածությանը՝ պայմ է խոսել «**հիմնական իրավունքի կրաքանչական**» և «**հիմնական իրավունքի գործադրության**» կամ «**հիմնական իրավունքի իրավանացնում**» մասին, եթե նկատ ունեն նարդկային արարող: Կարծիք արտահայտելը հիմնական իրավունքի կիրառում չէ, որովհետև, օրինակ, ՀՀ Սահմ. 27-րդ հոդվածի առաջին մասը չպետք է բյուրընունի իրեն կարծիք արտահայտելու լիազորություն: Նոյն կերպ արվեստագետը չի գործադրում ՀՀ Սահմ. 40-րդ հոդվածում ամրագույն հիմնական իրավունքը, որովհետև ստեղծագործության ազատությունը չի կարող մեկանագույն իրեն բույլատրույն կամ արտոնություն ունի, չի «իրականացնում» ՀՀ Սահմ. 38-րդ հոդվածով սահմանած հիմնական իրավունքը: Հիմնական իրավունքի սույն գործադրում (կիրառում, իրականացնում) է հիմնական իրավունքը՝ որպես սույն պարագաների հիմնական իրավունք պաշտպանվող արժեք: Այս նաև մասնամասն տես՝ Irsen, Staatsrecht II, Grundrechte, S. 2425.

43 Սյան կոչոված անձնագիրը պահպանության հետուահարտության մեջ առաջարկությունը: ԴԱԴ 19.10.2006 – 1BvR 402/06:

44 Schmidt: Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, S. 99.

45 Տե՛ս ԳԴՀ Դաշնային վարչական դատարանի ԴՎԴ 86, 321 (328f.) որոշումը:

46 Pieroth/Silberkuhl (Hrsg.): Die Verfassungsbeschwerde, Münster 2008, S. 263.

47 ԴԱԴ 117, 71 (89):

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Վարքի համար պատասխանատու անձնավորություն: Դա ենթադրում է, որ յուրաքանչյուր ոք կարող է անձամբ որոշել իր ճակատագիրը և կերտել իր ապագան սեփական պատասխանատվությամբ⁴⁶: Ասվածը տարածվում է անխտիր կյանքի բոլոր բնագավառների և իրավունքի բոլոր ոլորտների վրա՝ առանց որևէ սահմանափակման⁴⁷:

V. Պաշտպանության պահանջի իրավունքը

ԳՂՀ ՀՕ 1-ին հոդվածը չի սահմանափակվում պետական իշխանության՝ մարդու արժանապատվությունը հարգելու և պաշտպանելու սույն օրինական պարտականությամբ, այլ հիմնական իրավունքի կրողի համար երաշխավորում է **պաշտպանության պահանջի իրավունքը**⁴⁸: Նման պաշտպանությունն ապահովում է սովորաբար **քրեական իրավունքի** միջոցով:

Պետությունը պետք է նաև անհատի համար արժանապատիվ կյանքով ապրելու հնարավորություն ստեղծի⁴⁹: Նա պարտավոր է, մասնավորապես, ապահովել արժանապատիվ գոյության համար անհրաժեշտ ապրուսության պայմանները⁵⁰: Ապրուստի համար անհրաժեշտ մինիմումի հարկման արգելքը բխում է մարդու արժանապատվության երաշխիքից և ծառայում է արժանապատիվ կյանքի համար անհրաժեշտ նվազագույն նախապայմանների ստեղծմանը: Մի պետություն, որի սահմանադրությունը մարդու արժանապատվությունը բարձրագույն արժեք է հոչակում, որը, սակայն, մյուս կողմից, համակերպվում է իր քաղաքացիների ընչազրկության հետ, տառապում է անտանելի ներքին հակասությամբ⁵¹:

Թե ինչքան հեռու է գնում սոցիալական պետության պատասխանատվությունը մարդու արժանապատվության տեսանկյունից, զգալի չափով կախված է հասարակության ստանդարտներից ու հարստության աստիճանից: Եթե արդարադատությունը խոսում է ապրուստի նվազագույն պայմանների ապահովման մասին, դա կախված է ժամանակից ու իրադրությունից: Ըստ ԴՍԴ թիվ 82, 60 (85) և 99, 246 (259) որոշումների՝ պետությունն իրավունք չունի անհատին զրկելու այն եկամուտից, որն անհրաժեշտ է նրա ապրուստի նվազագույն պայմանների համար, ինչպես նաև հարկելու այդ եկամուտը, և պարտավոր է օգնել, եթե անհատն իրենից անկախ պատճառներով իր ապրուստը հոգալ չի կարող⁵²:

46 ԴՍԴ 49, 286 (298):

47 Pieroth/Silberkuhl (Hrsg.): Die Verfassungsbeschwerde, S. 264:

48 ԴՍԴ 117, 71 (89):

49 ԴՍԴ 45, 187 (228); ԴՍԴ 117, 71 (95): Դեռևս Վայմարյան Հանրապետության Սահմանադրության 151-րդ հոդվածի առաջին մասը սահմանում էր. «Տնտեսական կարգը պետք է համապատասխանի արդարության սկզբունքներին՝ բոլորի համար մարդուն արժանապայել կյանքը ապահովելու նպատակություն»:

50 ԴՍԴ 40, 141 (173); 82, 60 (85); 117, 71 (95):

51 Sachs (Hrsg.): Grundgesetz-Kommentar, Art. 1 Rdnr. 40.

52 Տե՛ս նաև ԳՂՀ Պահանջման վարչական դատարանի ԴՎԴ 71, 139 (141) որոշումը:

VI. Հիմնական իրավունքի սահմանափակումը

ԳԴՀ ՀՕ 1-ին հոդ. առաջին մասի պաշտպանության ոլորտի նկատմամբ ցանկացած **միջամբուրյուն** միաժամանակ դրա **խախուսիմ է**⁵³: Դա բխում է ԳԴՀ ՀՕ 1-ին հոդ. առաջին մասում պարզ ու ոչ երկիմաստ «անձեռնմխելի» ձևակերպումից, որով բացառվում է որևէ օրենսդրական սահմանափակում, և մյուս կողմից նրանից, որ մարդու արժանապատվությունը ազատախոհ ժողովրդավարությունում պիտի լինի բարձրագույն արժեք և այդ պատճառով չի կարող խախուսիմ ոչ այլոց հիմնական իրավունքներով, ոչ սահմանադրորեն ամրագրված այլ արժեքներով⁵⁴: Այսպիսով, քանի որ մարդու արժանապատվությունն «անձեռնմխելի» է, ապա անբույլատրելի ու **հակասահմանադրական** են նրա նկատմամբ **միջամբուրյունը** և նրա **սահմանափակման** այլ ձևերը: Այս հիմքով արգելվում է նաև կյանքի ու արժանապատվության հավասարեցումը, ինչպես որ դա անում է ԴՍԴ-ն⁵⁵: Կյանքի նկատմամբ ոտնագությունը ծայրահեղ հանգամանքներում կարելի է արդարացնել, սակայն միշտ չէ, որ սպանությամբ պարտադիր ոտնահարվում է մարդու արժանապատվությունը⁵⁶:

Անշուշտ հատկապես ծայրահեղ կոնֆիլկտային իրավիճակներում մարդու արժանապատվության դեմ ոտնագության մասին պետք է խոսել միայն այն դեպքում, եթե մարդուն **արհամարհական չենով զրկում են իր մարդկային որակից և նրան սպորացնում են՝ վարվելով նրա հետ իրեն օրինակի**⁵⁷:

Գործ 2. Վուևանգման դրամա

Ա-ն և Բ-ն առևանգում են սրբի հիվանդությամբ լրացնապող արդյունարերող Ի-ին: Նրանք բարձր փրկագին են պահանջում Ի-ի հարազարմներից: Ի-ն զիմանքում է կյանքի համար ծայրահեղ վրանգավոր դրույյան մեջ, քանի որ չի կարող ընդունել իր դեկերը: Նույնիսկ եթե առևանգիչների պահանջը կարգավի, փրկագնի հանձննան գործընթացը և ազակ արժակումն այնքան երկար կտնեն, որ դեկորայրային օգնությունը չափազանց կուշանա: Այդ ընթացքում չերքակալված Բ-ն զիվի, որպես է Ա-ն պահում Ի-ին, սակայն հրաժարվում է հայդնել զեղությունը: Ի-ի կյանքը փրկելու համար ուղիկանությունը որոշում է խոչքանակման միջոցով Բ-ից կորզել ցանկալի դեկեկությունը: Խոհակո՞ւմ է այն ՀՕ 1-ին հոդ. առաջին մասը:

Լուծում: I. Մարդու արժանապատվության պաշտպանության ոլորտի էական դարդերից մեկը մարդու նույնականության ու ամրողականության պահպանումն է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր առումով: Այդ իսկ պարզաբանով

53 Schmidt: Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, S. 105.

54 ԴՍԴ 93, 266 (293):

55 ԴՍԴ 39, 1 (49); 88, 203 (254), Ipsen: Staatsrecht II, Grundrechte, S. 57.

56 Dreier (Hrsg.): Grundgesetz-Kommentar, Bd. I, Art. 1 Rdnr. 147.

57 Schmidt: Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, S. 105.

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

պետքական իշխանությանը, դրանով նաև ուղիկանությանը, արգելված է ինչպանզումը: Քանի որ Բ-ն «ձեռքակալված անձ» է, այդ արգելվը բխում է միաժամանակ՝ ՀՕ 104-րդ հոդ առաջին մասի 2-րդ նախադասությունից⁵⁸: **II. Այսպիսով, ուղիկանությունը ուղարկել է մարդու արժանապարփության դեմ:** **III. Ի-ին պաշտպանելու ցանկությունը սահմանադրախրավական արդարացում չէ ուղիկանության արարքի համար:** Միայլ կյաներ այսպես բախում դեմենի Բ-ի և Ի-ի մարդկային արժանապարփության միջև և Բ-ի արժանապարփությունը զոհել Ի-ի արժանապարփությանը զույր այն պարզաբույս, որ Բ-ն անարդար է վարվել, և Ի-ն գումար է այդ անարդարությունից: Թեև պետքությունը ՀՕ 1-ին հոդ առաջին մասի ուժով (2-րդ հոդ երկրորդ մասի առաջին նախ. համադրությամբ) պարփակոր է պաշտպանել մարդու կյանքը, սակայն թե նա ինչպես կկարգարի իր այդ պարփականությունը, ՀՕ-ն նրա համար չի նախանշում, այլ «սկզբունքում նա ինքը պեսք է որոշի իր սեփական պարփականարփությամբ»⁵⁹: Դրան հակառակ՝ հարցակ սահմանված է, որ նա իրավունք չունի ուղանահարելու մարդու արժանապարփությունը: Ի-ի մուր այժմ՝ **միմիայն կյանքն է վրանգված**. հանցավորությունը և հարկապես կյանքի համար վրանգավոր հանցավորությունը պարուիսա է յուրաքանչյուր հասարակության համար, բայց ոչ միջամտություն հապուկ մարդու արժանապարփության նկարմամբ⁶⁰:

VII. ԳԴՀ ՀՕ 1-ին հոդվածի առաջին մասը միջամտության լիազորություն

Գործ 3.

Դաշնային վարչական դարպարանը պիտի որոշում կայացներ այն հարցի վերաբերյալ, թե արդյոք իրավաչափ կյանի բույլապրել «PeepShow»-ի անցկացումը: Դաշնային վարչական դարպարանը մերժում է այն պարզաբարանելով, որ ցուցադրության համար կիմը ելույթի առանձնահարուկությունը չնի պարզաբույզ կամ պարզացվի և դրա միջոցով կուրմահարվի նրա արժանապարփությունը: Մարդու արժանապարփության ուղանահարումը չի կարող արդարացվել նաև նրանով, որ «PeepShow»-ում ելույթ ունեցող կիմը կամավոր է գործում. մարդու արժանապարփությունն օբյեկտիվ, անկոնորինելի արժեք է, որի հարգումից անհար չի կարող հրաժարվել⁶²:

Մարդու արժանապատվության անձեռնմխելիությունը չի ստեղծում մարդու պարփականություն՝ դրսևորելու «արժանապատիվ» վարքագիծ, և այդ պատճառով չի կարող հիմք ծառայել այնպիսի միջոցառումների համար, որոնք ուղղված են անձամբ հիմնական իրավունքի կրողի դեմ: Իհարկե բազմակարծ հասարակությունում կան երևույթներ, որոնք հազիվ

58 ՀՕ 104րդ հոդ. առաջին մասի 2-րդ նախ.ը սահմանում է. «Արգելվում է ձեռքակալված անձանց ենթարկել դաժան վերաբերունքի թե՛ հոգեպես, թե՛ ֆիզիկապես»:

59 ԴԱԴ 46, 160, 164f.

60 Pieroth/Schlink: Grundrechte, Staatsrecht II, Heidelberg 2007, S. 8485.

61 Էրոսիկ պար, սրբիվթիք:

62 ԴԱԴ 64, 274:

թե համատեղելի են մարդու արժանապատվության հետ⁶³: Այնուամենայնիվ պետության խնդիրը չէ իր քաղաքացիների բարելավումը⁶⁴, ավելի շուտ նրա պարտականությունն է անհատի և հանդության պաշտպանությունը: Հետևաբար մարդու արժան ապատվության սկզբունքը կվերածվեր իր հակադրությանը, եթե նրանում տեսնեինք մի լիազորություն, որը թույլ կտար անհրաժեշտության դեպքում նաև հարկադրական միջոցներով քաղաքացիներին մղելու մի վարքագծի, որը համապատասխանում է արժանապատվության մասին ավանդական պատկերացումներին⁶⁵:

Հերկնարար, հենց սկզբից անհաջող էր այն հիմնավորումը, թե կնոշն իրքի օրյեկտ ցուցադրության հանելը ուղևահարում է մարդու արժանապատվությունը⁶⁶: Բացի այդ, Դաշնային վարչական դատարանի դրվագ որոշմանը բնորոշ է այն գրամարանական սիսալը, որը հիմնվում է հիմնական իրավունքի և պաշտպանվող արժեքի անբավարար դարձերակման վրա⁶⁷. Նոյնիսկ եթե կիսենք Դաշնային վարչական դատարանի այն գիտակենորը, թե կնոշը (կամավոր) ցուցադրության հանելը «ոչ արժանավայել» բան է, ապա դրանով կվճառավեր միայն ՀՕ 1-ին հոդվածի առաջին մասի առաջին նախադատությամբ պաշտպանվող արժեքը, իսկ (պետության դեմ ուղղված) հիմնական իրավունքը, ընդհանրապես չէր շոշափվի: Այս կապակցությամբ գիտին է հիշեցնել «հիմնական իրավունքներից հրաժարվելու» ինսփրիպուտի մասին⁶⁸, որը ինդիք ունի մեզ հեկ պահելու հիմնական իրավունքների գործողության սկզբունքի վրանգավոր անդեսումից: Նոյնիսկ իր «ոչ արժանավայել» վարքով հիմնական իրավունքի կրողը չի հրաժարվում նրանից, որ պետական մարմինները հարգեն իր մարդկային արժանապատվությունը⁶⁹:

63 Հատկապես պրոնկությամբ գրադելուն նպաստելը և պրոնկությունն ինքը երկար ժամանակ դիտվում էին իրքն մարդու արժանապատվության ուսմահարում: 2002 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած «Պրոնկության մասին» Գ-Դ օրենքով օրենսդիրը պարզաբանեց, որ պրոնկությունն ինքը այլևս հակարարության չէ: Մասնադրասահման պրոնկությունը համապատասխան «ծառայությունների մասուցման պայմանագրերից» ծագող պահանջները կարեն է պաշտպանել դատական կարգով: Այստեղից հետևում է, որ պրոնկությամբ գրադելուն նպաստելը և ստավել ևս պրոնկությունն ինքը չեն ուղարկում մարդու արժանապատվությունը: Տե՛ս Schmidt: Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, S. 103. Հմ. ՀՀ քր. օր. 262-րդ հոդ. հետ:

64 ԴՍԴՌ 22, 180 (219):

65 Dreier (Hrsg.): GrundgesetzKommentar, Bd. I, Art. 1 Rdnr. 151.

66 Ipsen: Staatsrecht II, Grundrechte, S. 61.

67 Տե՛ս թիվ 39 հոդմբ:

68 Այս տեսանկյունից ճշգրտման կարիք ունի «հիմնական իրավունքներից հրաժարվելու» հասկացությունը: Եթե հիմնական իրավունքը ստրկենտը չէ օգտվում հիմնական իրավունքներով պաշտպանված՝ գործդրությունների հնարավորություններից կամ բացակայում են դրա համար նախապայմանները, ապա դրա իրավունքներից հրաժարում չէ, այլ իրավական առողման ոչ էական ազգորդություն: Հնարավոր է, որ ինչ-որ մեկը իրաժարվի հենմել իր հիմնական իրավունքից վրա բնորդիմ իր իրավական որոշություն (պաշտպանության արժեքների) դեմ պեսուրյան ուսնձգությունների («volenti non fit iniuria»): Դա հնարավոր է, ամեն նոյնինս իրավական ձևով՝ հայցը կամ անհատական սահմանադրական դիմումը հետ վերցնելով: Հիմնական իրավունքը ստրկենտի կողմից տևականորեն կամ անհամար բոլոր իրմանական իրավունքներից հրաժարվելը (ապագայում պետական բոլոր միջոցառություններն անառակենալիորեն հանդուրժելու մտադրությամբ) կիմներ, ընդհակառակը, իրավական առումով անթույլատրելի, բայց մյուս կողմից նաև աներնակայելի:

69 ԴՍԴՌ 64, 274 (279):

ԳԵՐԼՈՒԾՎԱՆ ՆՅՈՒԹԵՐ

VIII. ԳՊՀ ՀՕ 1-ԻՆ ԽՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ԽԱԽՏՈՒՄԸ

Թե ինչ հանգամանքներում կարող է մարդու արժանապատվությունը ուսնահարվել, անհնար է ընդհանուր և վերացական ասել: Պատմահամակարգային տեսանկյունից կարելի է առանձնացնել ՀՕ 1-ին հոդ. առաջին մասի դեմ հետևյալ պիպիլ ուղնչգուրյունները⁷⁰.

• ստրկությունը, ճորտությունը, խտրականությունները, որոնք ժխտում են խտրականության ենթարկվողի մարդ լինելը, մարդկանց առևտուրը, այսինքն՝ **մարդկանց հավասարության զանգվածային խախումները**,

• խոշտանգումը, կտտանքները, մարմնական պատիճները, ուղեղի լվացումը, դեղամիջոցների ու իիպնոսի օգնությամբ մարդու կամքը կոտրելը, գաղտնի կամ բռնի բժշկական գիտափորձները հետազոտական կամ բազմացման նպատակով, սիստեմատիկ նվաստացումներն ու ստրացումները, այսինքն՝ **մարդու ֆիզիկական ու հոգեու նոյնականության ու ամրողականության զանգվածային խախումները**,

• ապրուստի համար անհրաժեշտ մինիմումից գրկելը (օրինակ չափագում բարձր հարկային բեռի միջոցով), սեփական պահանջմունքներն ու ցանկությունները պետությանը ներկայացնելու ցանկացած հնարավորությունից զրկելը, այսինքն՝ **անհապի հանդեպ սոցիալական ու իրավական պետության պարախանակարգության զանգվածային անդեսումները**:

Օրինակներ. Ցամաքում գրնակող անմեղ մարդկանց որպես ռուսը օգտագործվող ինքնարիոի միջոցով պարապելիք վճասներից պաշտպանելու համար ահարեկիչների կողմից առևանգված դրանսպորտային ինքնարիոր խփելը ԴՍԴ-ն անընդունելի է համարում, քանի որ դրանով ինքնարիոի անձնակազմն ու ուղևորները «առարկայացվում և միաժամանակ իրավագրկվում են», որովհետք նրանց կյանքից զրկելն օգտագործվում է որպես ուրիշներին փրկելու միջոց⁷¹:

Սրի դեկելվորի կիրառումը ԴՍԴ-ն որակել է ոչ թե որպես մարդու արժանապարփության, այլ միայն ընդհանուր անձնական իրավունքի (ՀՕ 2-րդ հոդ. առաջին մասի) հիմնախնդիրը⁷²: Դրան հակառակ՝ առ զարգրնալում դիրում է իրեն ոչ միայն բնակարանի անձեռնմխելիության իրավունքի, այլ նաև մարդու արժանապարփության խախումը, եթե չի հարգվում մասնավոր կյանքի բացարձակ պաշտպանված անձեռնմխելի ոլորտը⁷³:

ԴՍԴ-ն կալանավորների արժանապարփությունը ուղևահարված է համարում, եթե նրանք երբեք կրկին ազարվելու ոչ մի հնարավորություն չունեն⁷⁴, կամ եթե երկու կալանավոր պահպան են մուրավորապես 7,6մ² մա-

70 Schmidt: Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, S. 103.

71 ԴՍԴ 115, 118 (154):

72 ԴՍԴ 34, 238 (247):

73 ԴՍԴ 109, 279 (314ff.):

74 ԴՍԴ 109, 133 (150):

կերևով մենախցում⁷⁵, ինչպես նաև եթե խցանված կոյուղու պատճառով նրանց խուզը միշտ աղբուղում է կղղանքներով⁷⁶: Մարդու արժանապատվությունը պաշտպանելու նպագակով ԴՍԴ-ն պահանջում է, որ մեղադրյալը «դադարակարության վրա ազդելու, իրեն ներկայացված մեղադրանքների դեմ անձամբ արդահայրվելու, իր պատասխանակարգությունը մեղմացնող հանգամանքներ ներկայացնելու, դրանց լրիվ և սպառիչ արուգմանն ու զնահարմանը հասնելու հնարավորություն ունենա ու նաև դրանից փաստացի օգուղել կարողանա»⁷⁷:

IX. Սահմանադրափական արդարացումը

ՀՕ 1-ին հոդ. առաջին մասը ենթակա չէ օրենսդրական սահմանափակման: Քանի որ այն ՀՕ 79-րդ հոդ. երրորդ մասի⁷⁸ ուժով չի կարող փոփոխվել նույնիսկ սահմանադրական փոփոխությունների դեպքում, անթույլատրելի է նրա նկատմամբ միջամտության արդարացումը կողիքին սահմանադրական իրավունքի միջոցով⁷⁹: Կարելի է նման բան ենթադրել միայն նույնպես ՀՕ 79-րդ հոդ. երրորդ մասով սահմանադրական փոփոխություններից պաշտպանված սահմանադրական սկզբունքների հետ բախման դեպքում: Սակայն մարդու արժանապատվության՝ իրքն «ազատախոհ ժողովրդավարությունում բարձրագույն արժեք» բնութագրից բխում է, որ ՀՕ 20-րդ հոդվածի սկզբունքները⁸⁰ գոյություն ունեն հանուն մարդու արժանապատվության և այդ իսկ պատճառով չեն կարող ՀՕ 1-ին հոդվածի նկատմամբ միջամտության արդարացում լինել⁸¹: Արդարացված չէ նաև միջամտությունը մեկի մարդկային արժանապատվության նկամամբ՝ ի պաշտպանություն մեկ ուրիշի արժանապատվության⁸²: Նման արդարացումն ի սկզբանե դատապարտված է անհաջողության, որովհետև թեև անհատները կարող են բախվել իրենց շահերով ու գործողություններով, բայց ոչ երբեք իրենց արժանապատվությամբ: Այսպիսով, մարդու արժանապատվության նկատմամբ յուրաքանչյուր միջամտությունը միաժամանակ դրա խախողում է⁸³:

75 ԴՍԴ 35, 202 (236):

76 ԴՍԴ 47, 46 (73):

77 ԴՍԴ 63, 332 (337):

78 ՀՕ 79-րդ հոդ. երրորդ մասը սահմանում է. «Անբույսատրելի է այն իիմանական օրենքի այնպիսի փոփոխությունը, որի միջոցով կղղանքներ դաշտում դաշնային հողերի, օրենքների ընդուննմբ դաշնային հողերի սկզբունքային նաև անկցություն կամ 1-ին և 20-րդ հոդվածներում ամրագրված սկզբունքները»:

79 ԴՍԴ 93, 266 (293); 107, 275 (284):

80 ՀՕ 20-րդ հոդվածը սահմանում է. «1. Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը ժողովրդավարական և սոցիալական դաշնային պետություն է:

2. Ամբողջ պետական իշխանությունը բխում է ժողովրդից: Այն իրականացվում է ժողովրդի կողմից ընտրությունների ու քվեարկությունների և օրենտիփի, գրծադիր ու դատավան իշխանության հաստիկ մարմինների միջոցով:

3. Օրենտիփի իշխանությունը կաշկանդված է սահմանադրական կարգով, գրծադիրը և դատավանը՝ օրենքով և իրավունքով:

4. Ցուրաբանշյուրի դեմ, ու կվորձի վերացնել այն կարգը, ունեն բոլոր գերանացիները դիմադրության իրավունքը, եթե տվյալ դրույթում այլ եթք չկա»:

81 ԴՍԴ 75, 369 (380):

82 Stark/ Schmidt: Staatsrecht (Prüfe dein Wissen), 2003, S. 47.

83 Schmidt: Grundrechte sowie Grundzüge der Verfassungsbeschwerde, S. 105; Pieroth/Schlink: Grundrechte, Staatsrecht II, S. 84

ԳԵՐԼՈՒԾՎԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ



Անահիպ ՄՄՆԱՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիրության ֆակուլտետի
2-րդ դասընթացի մագիստրանտ

**ՀՀ ՍԴ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀԱՄԱՊԱՏՍԽԱՆԱԿԱՆ
ՃԱՆԱՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀՈՌՈՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՄԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՄԱՊԱՏՍԽԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ ԿԱՅԱՑՎԱԾ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետը նախատեսում է, որ Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով՝ մինչև միջազգային պայմանագրի վավերացումը, որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ իիմնական օրենքի 6 հոդվածը սահմանում է, որ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել: Հետևաբար ՀՀ Սահմանադրական դատարանի հիշյալ լիազորությունը ձեռք է բերում բացառիկ կարևորություն, քանզի, թեև միջազգային պայմանագրերը հանդիսանում են միջազգային իրավունքի իիմնական աղբյուր, պետության արտաքին գործառույթների իրականացման կարևոր միջոց, սակայն վերջիններս միջազգային հարաբերությունների իրավական հիմքը լինելուց բացի հանդիսանում են սահմանադրական իրավակարգի ամրապնդման կարևորագույն պայման, երկրի իրավական համակարգի բաղկացուցիչ մաս: Ուստի անհրաժեշտություն է առաջանում քննարկել ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչելու մասին որոշում ընդունելու հետևանքները, ինչին կանդրադառնանք 1998թ. հուլիսի 17-ին Հռո-

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

մում ստորագրված՝ Սիջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով կայացված որոշման համատեքստում:

Նշենք, որ, ի տարբերություն հետխորհրդային այլ երկրների սահմանադրական դատարանների, որոնք չունեն վերը նշված գործերի քննության հարուստ պրակտիկա¹, ՀՀ Սահմանադրական դատարանի ակտերի ճնշող մեծամասնությունը (հատկապես մինչեւ սահմանադրական բարեփոխումները) վերաբերում է միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցին², ինչը պայմանավորված է նրանով, որ միջազգային պայմանագրերի սահմանադրական վերահսկողությունը ՀՀ-ում հանդիսանում է նախնական պարտադիր սահմանադրական վերահսկողության առարկա: Ուստի Ազգային ժողովի վավերացմանը ենթակա միջազգային պայմանագրերը՝ դրանցով ստանձնված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով, նախապես ներկայացվում են Սահմանադրական դատարան: Թեև վերը նշված գործերի քննության մեծ մասի արդյունքում ՀՀ Սահմանադրական դատարանը որոշում է ընդունել դրանցում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու մասին³, սակայն հիշյալ մարմնի պրակտիկային հայտնի են մի շարք դեպքեր, երբ նշված գործերի քննության ընթացքում ընդունվել է բացասական որոշում:

Այդ որոշումներից է 1998թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Սիջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով կայացված որոշումը: Նշենք, որ ՀՀ Սահմանադրական դատարանի հիշյալ որոշումը ընդունվել է 2004թ. օգոստոսի 13-ին՝ մինչև ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելը: Հետևաբար անհրաժեշտ է վերլուծել նշված որոշման կայացման հիմքերը 1995թ. ՀՀ Սահմանադրության համատեքստում և այդ հիմնախնդրին վերաբերող օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները սահմանադրական բարեփոխումների ու դրա արդյունքում ընդունված օրենքների տեսանկյունից:

Հարկ ենք համարում նկատել, որ Հայաստանի Հանրապետությունը Կանոնադրությունը ստորագրել է 1999թ. հոկտեմբերի 1-ին: Բայց վերջինս

1 Տե՛ս “Конституционное правосудие в странах СНГ и Балтии” (отв. ред. М. А. Митюков), լ., 1998, էջ 73:

2 Տե՛ս www.concourt.am:

3 Տե՛ս “Конституционное правосудие в странах СНГ и Балтии” (отв. ред. М. А. Митюков), Մ., 1998, էջ 74:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ՀՀ կողմից չի վավերացվել այն պատճառով, որ 1995թ. ՀՀ Սահմանադրության տեքստը, մասնավորապես վերջինիս 6 հոդվածը նախատեսում էր, որ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո: ՀՀ Սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 91 և 92 հոդվածներին չհամապատասխանող էր ճանաչել 1998թ. հուլիսի 17-ին Հռոմում ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մասին համաձայնագրում (կից հայտարարությամբ) ամրագրված այն պարտավորությունը, ըստ որի Միջազգային քրեական դատարանը լրացնում է ՀՀ ներպետական քրեական իրավագործության մարմինները (Կանոնադրության նախարանի 10-րդ մաս և 1 հոդված), ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 40 հոդվածի, 55 հոդվածի 17-րդ կետի, 81 հոդվածի 1-ին կետի պահանջներին չհամապատասխանող էր ճանաչել Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 5 հոդվածի դրույթներով ստանձնած պարտավորությունը, որով բացառվում է դատապարտված անձանց ներպետական լնթացակարգով ներման իրավունքի և համաներման հնարավորության իրացումը:

Իր վերը նշված որոշմամբ Սահմանադրական դատարանը արձանագրեց, որ «...արդարադատության իրականացումը հանդիսանում է դատարանների բացառիկ իրավասությունը: Ներպետական դատական համակարգի առնչությամբ ՀՀ Սահմանադրության 91 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատություն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Սահմանադրության 92 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությանը ընդհանուր իրավասության, այդ թվում նաև քրեական իրավագորությունը իրականացնող դատարաններն են առաջին ատյանի դատարանները, վերաբնիշ դատարանները և վճռաբեկ դատարանը:

ՀՀ Սահմանադրության՝ դատական իշխանությանը վերաբերող 6-րդ գլուխը, հատակորեն սահմանելով ՀՀ դատական իշխանության համակարգը, չի նախատեսում որևէ դրույթ, որը հնարավորություն կտար միջազգային պայմանագրով լրացնել ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ քրեական իրավագորություն իրականացնող դատական մարմինների համակարգը՝ քրեական իրավագորության միջազգային դատական մարմնով»:

Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչված Կանոնադրության մյուս դրույթին, այդ առումով ՀՀ Սահմանադրական դատարանը նշել է, որ «...այն դեպքում, եթե Կանոնադրության 5 հոդվածում նախատեսված հանգարծություններ կատարած անձանց նկատմամբ քրեական իրավագոր-

բուրյուն իրականացնում են ՀՀ ներպետական դատարանները, վերջիններիս կողմից ազատազրկման դատապարտված անձինք կարող են օգտվել ներում հայցելու հնարավորությունից և համաներման միջոցով պատժի կրումից ազատվելու կամ ազատազրկման ժամկետի կրճատման հնարավորությունից: Մինչդեռ, նույն հանցազործությունների համար Դատարանի՝ որպես ներպետական քրեական իրավագորության համակարգը լրացնող մարմնի, կողմից դատապարտված՝ ՀՀ ընդհանուր իրավազորության ներքո գտնվող անձինք Կանոնադրության 105 հոդվածի պահանջներին համապատասխան գրկում են ՀՀ Սահմանադրության 40 հոդվածով նախատեսված ներման իրավունքից, ինչպես նաև 81 հոդվածով ամրագրված համաներման հնարավորությունից:

Հայաստանի Հանրապետությունը, ի կատարումն ՀՀ Սահմանադրության 4 հոդվածով ստանձնած՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքների, չի կարող ստանձնել Սահմանադրությամբ շնախատեսված՝ մարդու իրավունքների սահմանափակման այնպիսի պարտավորություններ, որոնք նվազ բարենպատ վիճակ կատեղծեն ՀՀ իրավազորության ներքո գտնվող անձանց համար՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների և ազատությունների երաշխավորման առումով»:

Նկատի ունենալով, որ 1995թ. ՀՀ Սահմանադրությունը, մասնավորապես վերջինիս 6 հոդվածը նախատեսում էր, որ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո, Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը Հայաստանի Հանրապետությունը չվավերացրեց⁴: Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս չդարձավ նաև ՀՀ Սահմանադրական դատարանի վերը նշված որոշումն ընդունելուն հաջորդող ժամանակաշրջանում՝ ՀՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելուց հետո՝ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ Սահմանադրական դատարանը իր՝ 2004թ. օգոստոսի 13-ի ՍԴՌ-502 որոշմամբ ամրագրեց, որ «Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի 6-րդ մասի դրույթները՝ ՀՀ Սահմանադրական դատարանը, ելնելով նաև միջազգային իրավակիրառական պրակտիկայից, հնարավոր է համարում ՀՀ Սահմանադրության այնպիսի փոփոխություն կամ լրացում, որը կճանաչի Միջազգային քրեական դատարանի կանո-

4 Այդ առումով հարկ ենք համարում իշխատակել նաև 2005թ. մարտին Եվրոպական հանձնաժողովի կողմից Եվրոպական խորհրդին ներկայացված Հայաստանի վերաբերյալ գեկուցը, որում առնանգվեց, որ «1999թ. Հայաստանը ստորագրել է Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը: Սակայն Սահմանադրական դատարանը բացասական կարծիք արտահայտեց ազգային օրենտորության հետև Հռոմի կանոնադրության համատեղելության վերաբերյալ՝ այսպիսով կանոնադրությունը վավերացումը՝ կամված Սահմանադրության վերամայման հետ» (տես Եվկրի գեկուց: www.mineconomy.am):

ԳԵՐԼՈՒԾՎԱՆ ՆՅՈՒԹԵՐ

նադրությամբ նախատեսված պարտավորությունները, կամ այդ Դատարանի իրավագորությունը՝ որպես ներպետական դատական համակարգը լրացնող մարմին»: Հետևարքը, իր վերը նշված որոշմանը ՀՀ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում արտահայտեց ՀՀ օրենսդրությանը համապատասխան Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը վավերացնելու առավել նպատակահարմար ուղղու, այն է՝ ՀՀ Սահմանադրության այնախի փոփոխություն կամ լրացում կատարելու վերաբերյալ, որը կճանաչի Միջազգային քրեական դատարանի կանոնադրությամբ նախատեսված պարտավորությունները, կամ այդ Դատարանի իրավագորությունը՝ որպես ներպետական դատական համակարգը լրացնող մարմին⁵:

Այդ առումով հարկ է նկատել, որ մի շարք երկրներ, որոնց սահմանադրական արդարադատության մարմինները Սահմանադրությանը չհամապատասխանող են ճանաչել Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը, վերջինս վավերացնելու համար ընտրել են հենց վերը նշված ճանապարհը: Այդ առնչությամբ կարելի է հիշատակել Ֆրանսիայի օրինակը, որի Սահմանադրական խորհուրդը, Սահմանադրությանը չհամապատասխանող ճանաչելով Կանոնադրության մի քանի դրույթներ, արձանագրեց, որ «Զանգի Ֆրանսիան Միջազգային քրեական դատարանի կանոնադրության մշակման աշխատանքներին ներգրավված ամենաակտիվ պետություններից մեկն է, անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ձեռնարկել դրա վավերացման նպատակով»: Ընդ որում «..., Սահմանադրությունում փոփոխություններ պետք է կատարվեն մինչև վավերացման ակտիվ կապակցությամբ քվեարկությունը»: Հետագայում Ֆրանսիայի Սահմանադրությունը լրացվեց նոր հոդվածով, որը նախատեսեց, որ Ֆրանսիայի Հանրապետությունը կարող է ճանաչել Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը 1998թ. հուլիսի 18-ին ստորագրված պայմանագրով ամրագրված պայմաններով: Վերը նշված հիմնախնդրի առումով հարկ ենք համարում հիշատակել նաև Լյուքսեմբուրգի օրինակը, որի Սահմանադրությունը լրացվեց հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով՝ «Սահմանադրության որևէ դրույթ չպետք է խոչընդոտի Միջազգային քրեական դատարանի կանոնադրության հաստատմանը և դրանից բխող վիճակի վերաբերյալ գեղագույն դատարանի կանոնադրության վավերացման առնչությամբ առաջացած սահմանադրական հարցերի վերաբերյալ գեղագույն նշել է, որ «Զնայած սահմանադրական մակարդակում գրյուրյուն ունեցող խնդիրներից՝ պետությունները կարող են քննարկել Հոռմի կանոնադրությունը վավերացնելու մի քանի լուծումները: Դրանք կարող են բարեկացնել իններևական միջոցներից՝ 1)Սահմանադրությունը նոր հոդվածով լրացնելը, որը բոլոր կառու լուծել բոլոր համապատասխան սահմանադրական իննդիրները և կվերացնի հանապատճեն հոդվածների համար բացառություններ նախատեսելու անհրաժեշտությունը, 2)Սահմանադրության բոլոր հոդվածների համակարգային վերանայումը, որոնք պետք է փոփոխվեն այնպես, որպեսզի համապատասխանեն Կանոնադրությամբ, 3)պատղամնների կողմից հսկանած հատուկ ընթացակարգի կիրառումը, որի արդյունքում Կանոնադրությունը կարող է վավերացվել՝ չնայած այն համագնանքին, որ առանձին հոդվածների մեջնաբանությունը, որը հնարապետություն կուտ խոսափել Կանոնադրության հետ կողմիաներից»(տես <http://www.icrc.org/Web/rus/siterus0.nsf/html/venice-commission-271004>):

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

պարտավորությունների կատարմանը տվյալ Կանոնադրությամբ ամրագրված պայմաններով»:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, նշենք, որ «2007թ. Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացում» Հայաստանի վերաբերյալ ընթացիկ գեկույցում Եվրոպական հանձնաժողովն արձանագրեց, որ «Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը դեռ չի վավերացվել: Որպես առաջին քայլ 2007թ. հունիսին կառավարությունը որոշեց վերսկսել վավերացման գործընթացը, որի համար պահանջվում է Սահմանադրական դատարանի կողմից վերագնահատում»⁶, իսկ «2008թ. Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացում» Հայաստանի վերաբերյալ ընթացիկ գեկույցում Հանձնաժողովը նշեց, որ «Ոչ մի առաջընթաց չի գրանցվել Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության հաստատման և ստորագրման ուղղությամբ»⁷:

Վերը շարադրված հիմնախնդրի առումով հարկ է նկատել, որ, թեև 2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ Սահմանադրությունում կատարվեցին փոփոխություններ և լրացումներ, սակայն դրանք շրջանցեցին հիշյալ հարցերը: Մասնավորապես հիմնական օրենքի 91 հոդվածը սահմանադրական բարեփոխումներից հետո ամրագրեց, որ ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, իսկ 92 հոդվածը սահմանեց, որ ՀՀ-ում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաբենիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև մասնագիտացված դատարաններ: Ուստի ՀՀ Սահմանադրության բարեփոխսված տարրերակը նույնպես հստակ սահմանում է ՀՀ դատական իշխանության համակարգը և դրույթներ չի պարունակում միջազգային պայմանագրով քրեական իրավագործություն իրականացնող դատական մարմինների համակարգը լրացնելու մասին: Ու թեև ՀՀ Սահմանադրության 18 հոդվածը նախատեսում է, որ յուրաքանչյուր որ ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին, սակայն, մեր կարծիքով, այդ հոդվածն ամրողությամբ չի լուծում վերը նշված հիմնախնդրի, քանզի հիշյալ դրույթները վերաբերում են սուսկ յուրաքանչյուրի կողմից այդ մարմիններին դիմելու իրավունքին: Մինչեւ Մի-

⁶ Հանձնաժողովի աշխատակազմի աշխատանքային փաստաթուղթ: Խորիդին և Եվրոպական պաղամենտին ողղված Հանձնաժողովի հաղորդագրությանը կից «2007թ. Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացում»: Հայաստանի վերաբերյալ ընթացիկ գեկույց (ունենալու համար՝ www.mineconomy.am):

⁷ Հանձնաժողովի աշխատակազմի աշխատանքային փաստաթուղթ: Խորիդին և Եվրոպական պաղամենտին ողղված Հանձնաժողովի հաղորդագրությանը կից «2008թ. Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացում»: Հայաստանի վերաբերյալ ընթացիկ գեկույց (ունենալու համար՝ www.mineconomy.am):

ՎԵՐԼՈՒԾՎԱՆ ՆՅՈՒԹԵՐ

ջազգային քրեական դատարանի կանոնադրության 13 հոդվածը նախատեսում է, որ Դատարանը 5 հոդվածում նշված հանցագործությունների նկատմամբ իր իրավագործությունը կարող է իրականացնել..., եթե՝

ա) 14 հոդվածին համապատասխան Դատախազին ներկայացվում է այն իրավիճակը, որի դեպքում, ենթադրաբար, կատարվել է մեկ կամ մի քանի նման հանցագործություն⁸,

բ) Անվտանգության խորհուրդը, գործելով Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության VII գլխի հիման վրա, Դատախազին ներկայացնում է այն իրավիճակը, որի դեպքում, ենթադրաբար, կատարվել է մեկ կամ մի քանի նման հանցագործություն, կամ

ց) Դատախազը 15 հոդվածին համապատասխան հետաքննություն է սկսել այդ հանցագործության կապակցությամբ⁹:

Հետևաբար Միջազգային քրեական դատարանը չի սահմանափակվում անհատների կողմից դիմումներ ներկայացնելու դեպքերում իրավագործության իրականացնմաբ: Ուստի, կարծում ենք, որ ՀՀ Սահմանադրության 18 հոդվածը նույնպես ամբողջությամբ չի լուծում վերը նշված հիմնախնդիրը:

Նշենք, որ, ի տարբերություն ՀՀ Սահմանադրական դատարանի, Կանոնադրության հիշյալ դրույթը Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչվել Մոլդովայի Սահմանադրական դատարանի կողմից: Վերջինս արձանագրել է, որ Միջազգային քրեական դատարանը չի վերաբերում բացառիկ դատական ատյաններին, որոնց ստեղծումը արգելվում է սահմանադրական դրույթներով, չի փոխարինում քրեական արդարադատության ազգային համակարգը՝ քննելով առավել ծանր հանցագործությունները և պատճելով միայն այն դեպքերում, երբ ազգային դատական ատյանները չեն կարող կամ չեն ցանկանում դա կատարել: Ուստի Մոլդովայի Սահմանադրական դատարանը իր դիրքորոշումը հիմնավորելու համար հիմք է ընդունել այն հանգամանքը, որ Կանոնադրությունը սահմանում է այն հանցագործությունների շրջանակը և այն դեպքերը, երբ Միջազգային քրեական դատարանը իրականացնում է քննություն և կիրառում է պատիժ: Սակայն, մեր կարծիքով, դա չի կարող հիմք հանդիսանալ Մոլդովայի Սահմանադրական դատարանի հիշյալ դիրքորոշումը հիմնավորելու համար, քանզի այդպիսի դրույթ նախատեսվում է ոչ միայն վերը նշված մարմնի, այլև ներպետական դատարանների համար, որոնց ենթակա գործերի շրջանակը նույնպես սահմանվում է ներպետական օրենսդրությամբ: Մինչդեռ, եթե ներպետական դատական ատյանները հստակ

8 Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 14 հոդվածի համաձայն մասնակից պետությունը կարող է Դատախազին ներկայացնել այն իրավիճակը, որի դեպքում, ենթադրաբար, կատարվել են Դատարանին ընդդատյա մեկ կամ մի քանի հանցագործություն...:

9 Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 15 հոդվածի համաձայն Դատախազը կարող է սկսել հետաքննությունը proprio motu Դատարանին ընդդատյա ենթադրվող հանցագործությունների վերաբերյալ տեղեկատվության հիմնա վրա:

նախատեսվում են Սահմանադրությամբ, ապա նույնը չի կարելի ասել Միջազգային քրեական դատարանի կամ որևէ այլ միջազգային դատական ատյանի մասին: Ուստի այն դեպքում, եթե արգելվում է ստեղծել Սահմանադրությամբ շնախատեսված ներպետական դատական մարմիններ, նույն սկզբունքը պետք է կիրառվի նաև միջազգային դատական մարմինների նկատմամբ: Հետևաբար, դատական համակարգը կազմող մարմինների ամբողջությունը Սահմանադրությամբ նախատեսված լինելու պայմաններում դրանք լրացնող այլ մարմին ստեղծելու դեպքում անհրաժեշտ է, որպեսզի Սահմանադրությունը նախատեսի նաև այդ մարմինը կամ ամրագրի ներպետական դատական համակարգը այդպիսի մարմնով լրացնելու հնարավորություն: Ուստի, հաշվի առնելով վերը շարադրվածը, նենք առավել ընդունելի ենք համարում իիշյալ իիմնախսնդի առնչությամբ ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշումը, համաձայն որի Միջազգային քրեական դատարանի կանոնադրության նախարանի 10-րդ մասով և 1 հոդվածով նախատեսված այն դրույթը, որին համապատասխան Միջազգային քրեական դատարանը լրացնում է ՀՀ ներպետական քրեական իրավագորության մարմինները, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 91 և 92 հոդվածներին:

Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրությանը շիամապատասխանող ճանաչված Կանոնադրության այլ դրույթներին, նշենք, որ ՀՀ բարեփոխված Սահմանադրությունը նույնպես, մասնավորապես վերջինիս 20 հոդվածը նախատեսում է յուրաքանչյուր դատապարտյալի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունքը, իսկ 81 հոդվածը ամրագրում է համաներման հնարավորություն¹⁰: Ուստի սահմանադրական բարեփոխումների արդյունքում չեն փոխվել ՀՀ Սահմանադրության այն նորմերը, որոնց հակասում էին Միջազգային քրեական դատարանի կանոնադրության վերը նշված դրույթները: Դեռ ավելին, սահմանադրական բարեփոխումներից հետո ՀՀ Սահմանադրության 6 հոդվածը նախատեսում է, որ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել: Ու թեև, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի, «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածի 1-ին մասի համաձայն եթե ՀՀ Սահմանադրական դատարանը որոշում է ընդունել հայկական կողմի ստորագրած միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունները ՀՀ Սահմանադրությանը շիամապատասխանելու մասին, ապա

10 Այդ առողմանվ հարկ ենք համարում նկատել, որ Ֆրանքայի Սահմանադրական խորհրդը իիշյալ հարցի առնչությամբ նշել է, որ «Քանզի Կանոնադրության 103 հոդվածի համաձայն Միջազգային քրեական դատարանի կողմից դատապարտված անձանց ընդունելու պատրաստականությունն հայտնած պետությունը կարող է առաջարկել այդ անձանց ընդունելու պայմանները, որոնք պետք է համաձայնեցվեն Դատարանի հետ,...: Վերը շարադրվածը հիմք է տալիս եգուացնելու, որ Ֆրանքի կարող է առաջարկել նրանց ընդունելու իր պայմանները, մասնավորապես... կարող է նշել, որ դատապարտյալները կարող են ամրողությամբ կամ մասնակիորեն ազատվել ազատազրկման ձևով պատիժը կրելոց համաներման իրավունքից օգտվելու ուժով, ինտևաբար Կանոնադրության 10 հոդվածի դրույթները... չեն խախտում ժողովրդական սուվենության իրականացման իրմանական պահանջները, ինչպես նաև Սահմանադրության 17 հոդվածի դրույթները»:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

պայմանագիրը ԱԺ վավերացմանը չի ներկայացվում, բացառությամբ այդ հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ եթե ՀՀ Սահմանադրությանը հակասող պարտավորություններ նախատեսող բազմակողմ միջազգային պայմանագիրը հնարավորություն է տալիս այն վավերացնելու Սահմանադրությանը չհամապատասխանող պարտավորություններ նախատեսող դրույթները ՀՀ կողմից չկատարվելու կամ նրա համար դրանք պարտադիր չինելու վերաբերյալ վերապահում կամ հայտարարություն անելու միջոցով, ապա ՀՀ Նախագահը այդ պայմանագիրը կարող է ներկայացնել համապատասխան վերապահումով կամ հայտարարությունով ԱԺ վավերացմանը: Սակայն կարծում ենք, որ Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը այդ ընթացակարգով չի կարող վավերացվել: Հիշյալ եզրակացությանը հանգելու համար իինք է հանդիսանում այն հանգամանքը, որ Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 120 հոդվածի համաձայն Կանոնադրության վերաբերյալ որևէ վերապահում չի կարող արվել¹¹: Բացի այդ, մեր կարծիքով, «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի վերը նշված հոդվածը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 6 հոդվածին, քանի որ, ի տարբերություն օրենքի, վերջինս հիշյալ բացառությունը չի նախատեսում¹²: Հարկ է նկատել, որ ՀՀ Սահմանադրության վերը նշված դրույթը իրավաբանական ուժի և իրավական ակտերի հիերարխիայում գրադեցրած տեղի տեսանկյունից բոլորովին այլ կարգավիճակ նախատեսեց ՀՀ հիմնական օրենքի համար ու ընդգծեց վերջինիս դերը հասարակական հարաբերությունների կարգավորման բնագավառում: Ուստի այդ դրույթի հիմնական նպատակը պեսոք է լինի Սահմանադրության գերակայության ապահովման լիարժեք համակարգի ստեղծումն ու գործադրումը, ինչը բացառում է Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերի վավերացման հնարավորությունը¹³:

11 Այդ առումով նշենք նաև, որ, թեև վերապահումները լայնորեն տարածված են պետությունների միջազգային-պայմանագրային պարակնիկայում և «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 42 հոդվածի 9-րդ մասի համաձայն հայկական կողմից չպեսոք է հայտարարություն անի ՀՀ միջազգային պայմանագրի վերաբերյալ իր վերապահումը կամ հայտարարությունը հանդիպ համեմ մասին, որն արվել է հիշյալ օրենքի 29 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, քանի դեռ տվյալ միջազգային պայմանագրով սահմանված կարգով դրամից չեն հանվել այն դրույթները, որոնց վերաբերյալ ՀՀ Սահմանադրության կասակցությանը հայեան կողմը համապատասխան վերապահում կամ հայտարարություն է արել, սակայն «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վկենաչայի 1969թ. կրնվենցիայի 22 հոդվածը նախատեսում է, որ եթե պայմանագրին այ քան չի նախատեսում, վերապահումը կարելի է հսկել շամկացած ժանակակից և այն հանդիպ համար չի պահանջնում վերապահում թերունող պետության հասածայնությունը: Ուստի կարող է առաջանալ մի հրավիճակ, երբ ՀՀ Սահմանադրության հակասելու կողմից արած վերապահումը հանդիպ մինչև ՀՀ հիմնական օրենքին հասարակ դրույթները տվյալ միջազգային պայմանագրով սահմանված կարգով դրամից հանելը, քանի ՀՀ Սահմանադրության 6 հոդվածի համաձայն եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմերով, ապա կրնառում են այդ նորմերը(տե՛ս Անահիտ Մանաւայան, «ՀՀ Սահմանադրական դատարանի գործունեությունը՝ միջազգային պայմանագրերի սահմանադրությունը որոշելու բնագավառում», «Պատություն և իրավունք», N 1-2(39-40), Երևան, 2008, էջ 88-89):

12 Խոչ ՀՀ Սահմանադրության 6 հոդվածը համաձայն Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պեսոք է համապատասխանեն Սահմանադրությանը:

13 Նշենք, որ Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը Սահմանադրությանը չհամապատասխանող է ճանաչվել նաև Ռուսականայի Սահմանադրական դատարանի կողմից: Վերջին Ռուսականայի Սահմանադրությանը չհամապատասխանող է ճանաչել Միջազգային քրեական դատարանի կողմից: Ուստի Կանոնադրությունը Ռուսականայի կողմից չի վավերացվել, ինչը Ռուսականայի օրենտուրության համաձայն հնարավոր է միայն Սահմանադրությունում համապատասխան փոփոխություններ կատարելոց հետո:

ՎԵՐԼՈՒԾԱՎԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Հետևաբար, հաշվի առնելով ՀՀ օրենսդրության վերը նշված դրույթները, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2004թ. օգոստոսի 13-ի ՍԴՈ-502 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, ինչպես նաև 2005թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրության 6 հոդվածով ամրագրված այն դրույթը, համաձայն որի Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել, կարծում ենք, որ ՀՀ կողմից Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը վավերացնելու առավել նպատակահարմար ուղին, որը կապահովեր հիշյալ միջազգային պայմանագրի վավերացման բնականոն գործընթացը, ՀՀ Սահմանադրությունում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելն է:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԴՈՒՇԱՆՔԵՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՈՎԱՉՄԱՏԵՄԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱԾՈՒՄ ԳՈՎԱԶԴՎԱՅԻՆ-
ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՍԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԾ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

28 հոկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի (գեկուցող), Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բաղդալյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբեում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների միջև ուազմատնտեսական համագործակցության բնագավառում գովազդային-ցուցահանդեսային գործունեության ոլորտում փոխգործակցու-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թյան մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 2008 թվականի սեպտեմբերի 22-ին:

Ուստինասիրելով սույն գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթորքերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբեում՝ նպատակ ունենալով ապահովել Կողմերի պաշտպանունակության եւ ազգային անվտանգության անհրաժեշտ նակարդակ, ինչպես նաև ամրապնդել արդյունաբերության պաշտպանական ճյուղերի ձեռնարկությունների ձեւավորված եւ ձեւավորվող արտադրական եւ գիտատեխնիկական կոռպերացիայի պայմաններում փոխչափավետ ռազմատնտեսական համագործակցությունը:

2. Համաձայնագիրը բաղկացած է նախարանից, 9 հոդվածներից եւ վերջաբանից: Համաձայնագրում տրված են դրա իրագործման գծով Կողմերի լիազորված մարմինները եւ համաձայնագրի գործողության ոլորտը:

3. Համաձայնագրով սահմանվում է Կողմերի փոխազդակցությունը հետևյալ ուղղություններով.

- ռազմատնտեսական համագործակցության մասնակիցների, Կողմերի ձեռնարկությունների ու կազմակերպությունների միջեւ ռազմատնտեսական համագործակցության բնագավառում գովազդային-ցուցահանդեսային գործունեության ոլորտում փոխազդակցության ընդլայնում,

- ՀԱՊԿ անդամ պետությունների ցուցահանդեսներում իրենց ձեռնարկությունների ու կազմակերպությունների միասնական ազգային էքսպոզիցիաների ձեւավորում, ազգային արահների ստեղծում,

- ՀԱՊԿ անդամ պետությունների ձեռնարկությունների ու կազմակերպությունների համար առավել բարենպաստ ռեժիմի ստեղծում, ներառյալ՝ ցուցահանդեսային տարածքների եւ այլ ծառայությունների տրամադրումը,

- ՀԱՊԿ շրջանակներում ռազմատնտեսական համագործակցության բնագավառում միասնական գովազդային-ցուցահանդեսային դաշտի ձեւավորում, այդ ոլորտում տեղեկատվության եւ աշխատանքային փորձի փոխանակում, գովազդային-ցուցահանդեսային գործունեություն իրականացնող կազմակերպությունների փոխազդակցության իրականացում,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- պետական գաղտնիք կազմող եւ ռազմական նշանակության արտադրանքի վերաբերյալ սահմանափակ տարածման տեղեկատվության պահպանման միջոցառումների ապահովում՝ այն միջազգային պայմանագրերի շրջանակներում, որոնց մասնակից են հանդիսանում Կողմերը:

4. Համաձայնագրով նաև կարգավորվում են Կողմերի միջեւ գովազդային-ցուցահանդեսային գործունեության գծով կազմկոմիտեների եւ աշխատանքային խմբերի հիմնադրման հետ կապված հարցերը:

5. Համաձայնագրով սահմանում է Կողմերի միջեւ ծագած վեճերի լուծման կարգը: Համաձայնագրում նաև նախատեսված են դրույթներ՝ դրանում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու, ինչպես նաև համաձայնագրի ուժի մեջ մտնելու եւ դադարելու վերաբերյալ:

6. Համաձայնագրով կատարված է մեկ քնօրինակով՝ ոռուերեն:

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները ՀՀ Սահմանադրության 9 հոդվածին համահունչ ապահովում են Պայմանագրովող կողմերի միջեւ արտաքին հարաբերությունների իրականացումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Յ .

1. 2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբեում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների միջեւ ռազմատնտեսական համագործակցության քննագավառում գովազդային-ցուցահանդեսային գործունեության ոլորտում փոխգործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում իրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**28 հոկտեմբերի 2008 թվականի
ՍՊ- 768**

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԴՈՒՇԱՆՔԵՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՎԱՔՎԱԿԱՆ ԱՆՎԱԼՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԲՈՂՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԱՐՏՈՂՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱԳՅԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

28 հոկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի (գեղկուցող), Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալ Ռ. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրանք դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանեում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տուրքունների իրավապահ մարմինների եւ հատուկ ծառայությունների զինման համար հատուկ տեխնիկայի եւ հատուկ միջոցների մատակարարումների արտոնյալ պայմանների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 17.09.2008թ.։

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների իրավապահ մարմինների եւ հատուկ ծառայությունների զինման համար հատուկ տեխնիկայի եւ հատուկ միջոցների մատակարարումների արտոնյալ պայմանների մասին համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է Դուչանքեում՝ 2007 թվականի հոկտեմբերի 6-ին:

2. Համաձայնագրի նպատակն է ամրապնդել դաշնակցային հարաբերություններն անդրազգային մարտահրավերների եւ անվտանգության սպառնալիքների հակազդեցության բնագավառում՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության (այսուհետ՝ ՀԱՊԿ) անդամ պետությունների իրավապահ մարմինների եւ հատուկ ծառայությունների զինման համար հատուկ տեխնիկայի եւ հատուկ միջոցների մատակարարումների արտոնյալ պայմաններ սահմանելու միջոցով:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- իր տարածքով համաձայնագրին համապատասխան արտոնյալ պայմաններով մատակարարվող հատուկ տեխնիկայի եւ հատուկ միջոցների տարանցմանը փոխադրման դեպքում, մատակարարող Կողմի կամ ընդունող Կողմի հարցման հիման վրա, առաջնահերթ կարգով ընձեռել համաձայնագրին համապատասխան մատակարարվող հատուկ տեխնիկայի եւ հատուկ միջոցների տարանցման իրավունք,

- համաձայնագրի շրջանակներում արտոնյալ պայմաններով մատակարարված հատուկ տեխնիկան եւ հատուկ միջոցներն իրավապահ մարմիններից եւ հատուկ ծառայություններից շվաճառել ու շփոխանցել օտարերկրյա պետություններին, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կամ միջազգային կազմակերպություններին՝ առանց մատակարարող Կողմի նախնական գրավոր համաձայնության,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- Վերը նշված պարտավորության խախտման կամ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպությունից դուրս գալու դեպքում, եռամսյա ժամկետում հատուկ տեխնիկա եւ հատուկ միջոցներ մատակարարած Կողմին ազատ փոխարկվող արժույթով վճարել մատակարարված հատուկ տեխնիկայի եւ հատուկ միջոցների գնի եւ համանման արտադրանքը համաշխարհային շուկա մատակարարելու ժամանակ ձեւավորված գնի միջեւ տարրերությունը՝ հանած դրա շահագործման յուրաքանչյուր տարրվա համար գեղշը,

- իրականացնել պետական գաղտնիք հանդիսացող եւ համաձայնագրի կատարման ընթացքում ստացված տեղեկությունների պաշտպանությունն իր օրենսդրությանը եւ 2004թ. հունիսի 18-ի՝ «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պահպանության փոխադարձ ապահովման մասին» համաձայնագրին համապատասխան,

- համաձայնագրի շրջանակներում համագործակցության ընթացքում ստացված հրապարակման ոչ ենթակա եւ գաղտնի բնույթ կրող տեղեկատվությունը, ներառյալ պայմանագրային գները, առանց շահագործիոց Կողմերի համաձայնության, չփոխանցել համաձայնագրի կողմ չհանդիսացող պետություններին, դրանց ֆիզիկական եւ իրավաբանական անձանց եւ չօգտագործել ի վնաս Կողմերից որևէ մեկի շահերի,

- համաձայնագրի շրջանակներում ստացված հատուկ տեխնիկայի ու հատուկ միջոցների, մտավոր սեփականության, օգտագործման համար չբույլատրված առարկայի եւ/կամ առանց փոխանցող Կողմի հետ համաձայնության չլիազորված իրավաբանական եւ ֆիզիկական անձանց հասանելիության դեպքում, ապահովել դրանց իրավական եւ այլ պաշտպանության անհրաժեշտ միջոցները՝ ներպետական օրենսդրությանը, ինչպես նաև միջազգային այն պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակից է հանդիսանում,

- համաձայնագրից դուրս գալու դեպքում պահպանել համաձայնագրի 6-րդ հոդվածի պահանջներն այնքան ժամանակ, քանի դեռ շահագործիոց Կողմերը բանակցությունների միջոցով չեն կարգավորել այն բոլոր վիճելի հարցերը, որոնք ծագել են համաձայնագրի գործողության դադարեցման առնչությամբ,

- սահմանել սույն համաձայնագրի դրույթների իրականացման համար լիազորված պետական մարմին եւ այդ մասին ծանուցել ՀԱՊԿ քարտուղարությանը:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված՝ արտաքին քաղաքականության բնագավառում

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բարիդրացիական եւ փոխահավետ հարաբերություններ հաստատելու վերաբերյալ սկզբունքին:

Ելմելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբեում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների իրավապահ մարմինների եւ հատուկ ծառայությունների գիննան համար հատուկ տեխնիկայի եւ հատուկ միջոցների մատակարարումների արտոնյալ պայմանների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**28 հոկտեմբերի 2008 թվականի
ՍՊ- 769**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 թվականի Հոկտեմբերի 6-ին դուժվաբեռնում
ՍՏՈՐԱԳՐՎԱծ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՉԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԿԱՌՎՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՅՆՎԳՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱծ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

28 հոկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Զ. Ղուկասյանի, Ֆ. Թողյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝ Հանրապետության նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դոճքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբեում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կառավարման համակարգի ստեղծման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորություննե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

թի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության աղիքը Հանրապետության Նախագահի՝ 13.09.2008թ.

ՀՀ ՍԴ մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՌԶԵՑ**.

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2007 թվականի հոկտեմբերի 6-ին՝ Դուշաբեկ քաղաքում: Համաձայնագրի նպատակն է ստեղծել հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կառավարման համակարգ:

2. Համաձայնագրում սահմանված են այն խնդիրները, որոնց լուծման համար ստեղծվում են ՀԱՊԿ ուժերի եւ միջոցների կառավարման համակարգը, ինչպես նաև ՀԱՊԿ հավաքական անվտանգության համակարգի ուժերի եւ միջոցների կազմում գործող հավաքական անվտանգության տարածաշրջաններում զորքերի կողմից խմբավորումների կառավարման համակարգերը:

3. Սույն համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

• համաձայնագրի մասնակից ՀԱՊԿ անդամ պետությունների հետ համատեղ ստեղծել ՀԱՊԿ ուժերի եւ միջոցների կառավարման համակարգ, որը զորքերի (ուժերի) կողմից տարածաշրջանային) խմբավորումների կառավարման կազմակերպչական-տեխնիկական հիմքը կազմող գործառնապես միմյանց հետ փոխսկապակցված կառավարման մարմինների, կառավարման կետերի եւ կառավարման միջոցների ամբողջություն է,

• ՀԱՊԿ ուժերի եւ միջոցների կառավարման համակարգի ստեղծման եւ գործելու ժամանակ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները գաղտնիության պայմանակարգի եւ գաղտնի տեղեկատվության պահպանության ապահովման ուղղությամբ՝ ՀՀ նորմատիվ իրավական ակտերին եւ ՀԱՊԿ շրջանակներում կնքված համաձայնագրին համապատասխան:

4. Համաձայնագիրը սահմանում է նաև այն ուժի մեջ մտնելու, համաձայնագրից դուրս գալու, փոփոխություններ եւ լրացումներ կատարելու, Կողմերի միջև վիճելի հարցերը լուծելու կարգը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին»

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Յ**.

1. 2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբեում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների կառավարման համակարգի ստեղծման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**28 հոկտեմբերի 2008 թվականի
ՍՊԸ- 770**



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԴՈՒՅԱՆՔԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՁԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆը
ՀԱՄՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

28 հոկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Նուկասյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր լնթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբեում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության խաղաղապահ գործունեության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 13.09.2008թ. ՀՀ ՍԴ մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթոթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության խաղաղապահ գործունեության մասին համաձայնագիրն ստորագրվել է 2007թ. հոկտեմբերի 6-ին՝ Դուշանբե քաղաքում:

2008 թվականի սեպտեմբերի 13-ի դրությամբ համաձայնագիրն ստորագրել է 7 պետություն՝ Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը, Տաջիկստանը, Ուզբեկստանը (վերապահումով):

Համաձայնագիրը նպատակ ունի Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության պատասխանատվության գոտում եւ սահմանակից շրջաններում ապահովելու հավաքական հիմունքով անվտանգություն եւ կայունություն:

2. Ըստ համաձայնագրի՝ դրա դրույթներն իրագործելու համար անհրաժեշտ է, մասնավորապես, ձեռնարկել հետեւյալ գործողությունները.

- վեճերի կարգավորմանն ուղղված խաղաղ միջոցներ ու գործողություններ /ՍԱԿ-ի կանոնադրությանը համապատասխան/ ներառող միջոցառումների ամբողջություն, ինչպես նաև զինվորական, միլիցիայի /ոստիկանական/ եւ քաղաքացիական անձնակազմի օգտագործմամբ անդամ պետությունների կողմից ձեռնարկվող հավաքական գործողություններ, որոնք ուղղված են պետությունների միջեւ կամ պետության սահմաններում երրորդ կողմի միջամտությամբ ռազմական գործողությունների կանխմանը, զարգացմանը,

- անկողմնակալ զինվորական, միլիցիայի /ոստիկանական/ եւ քաղաքացիական անձնակազմի՝ նպատակներով, խնդիրներով, տեղով եւ ժամանակով փոխկապակցված գործողությունների ամբողջություն, որոնք ձեռնարկվում են հնարավոր կամ գոյություն ունեցող հակամարտությունների շրջաններում իրավիճակի կայունացման համար, իրականացվում են խաղաղապահ գործողություններ անցկացնելու մանդատին համապատասխան եւ ուղղված են հակամարտության կարգավորմանը նպաստող պայմանների ստեղծմանը եւ խաղաղության ու անվտանգության պահպանմանը կամ վերականգնմանը:

Անդամ պետությունները խաղաղապահ գործողություններին մասնակցելու համար մշտական հիմունքով ստեղծում են Խաղաղապահ ուժեր:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Խաղաղապահ ուժերի համալրման համար անդամ պետությունները, իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան, մշտական հիմունքով հատկացնում են խաղաղապահ համակազմեր:

2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուչանքեռում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության խաղաղապահ գործունեության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9 հոդվածին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուչանքեռում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության խաղաղապահ գործունեության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**28 հոկտեմբերի 2008 թվականի
ՍԴՈ- 771**

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2007 թՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԴՈՒՇԱՆՔԵՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «1992 թՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ
ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՅ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՂԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՎՈՂ
ՌԱԶՄԱԿԱՆ ՆՃԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՔ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԼՐԱՅՈՒՄ ՎԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՔ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ.

Քաղ. Երեւան

28 հոկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի (գեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետութան պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբեում ստորագրված՝ «1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջեւ ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին» համաձայնագրի շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգի մասին» արձանագրության մեջ լրացում կատարելու մասին երկրորդ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 09.09.2008թ.:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացարությունները, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջեւ ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին» համաձայնագրի շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգի մասին» արձանագրության մեջ (այսուհետ՝ Հսկողության մասին արձանագրություն) լրացում կատարելու մասին երկրորդ արձանագրությունը Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է 2007 թվականի հոկտեմբերի 6-ին՝ Դուշանբեում:

2. Քննության առարկա արձանագրության նպատակն է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների զինվածության մեջ չմտնող զինվորական կազմավորումներին «1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջեւ ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին» համաձայնագրի պայմաններով ռազմական նշանակության արտադրանքի մատակարարման մեխանիզմ ապահովելը:

Քննության առարկա արձանագրությունը հնարավորություն է ընձեռում ընդլայնել համաձայնագրի եւ Հսկողության մասին արձանագրության գործողության շրջանակները, Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության գործունեության ձեւաչափը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3. «1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջեւ ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին» համաձայնագրի շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգի մասին» արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը ֆինանսական պարտավորություններ չի ստանձնում:

4. Քննության առարկա արձանագրությունը Հսկողության մասին արձանագրության անբաժանելի մասն է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. «1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջեւ ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին» համաձայնագրի շրջանակներում մատակարարվող ռազմական նշանակության արտադրանքի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգի մասին» արձանագրության մեջ լրացում կատարելու մասին երկրորդ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**28 հոկտեմբերի 2008 թվականի
ՍՊԸ- 772**

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԴՈՒՇԱՆՔԵՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ
ՎՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻճԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁՎՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

28 հոկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի (գեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանեում ստորագրված՝ «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 09.09.2008թ. ՀՀ ՍԴ մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Գ. Ղարիբջանյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Պ Ա Ր Զ Ե Ց .

«2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին արձանագրությունն ստորագրվել է 2007 թվականի հոկտեմբերի 6-ին՝ Դուշանբե քաղաքում:

Արձանագրությունը նպատակ է հետապնդում դյուրացնել ՀԱՊԿ Մշտական խորհրդում անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչների գործունեության ապահովման հետ կապված՝ համաձայնագրով նախատեսված դրույթները:

Արձանագրությունը նախատեսում է ՀԱՊԿ Մշտական խորհրդում անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչներին այնպիսի արտոնությունների եւ անձեռնմխելիության տրամադրում, որոնք հնարավորություն կընձեռն առավել արդյունավետ կատարել իրենց գործունեությունը:

«2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» համաձայնագրում սույն արձանագրությամբ նախատեսվում է կատարել փոփոխություններ եւ լրացումներ, մասնավորապես.

- արձանագրության բաժին I-ը լրացնել 91 հոդվածով,
- բաժին II-ը լրացնել 211 հոդվածով,
- համաձայնագիրը լրացնել նոր III բաժնով՝ հետեւյալ անվանմամբ.
«Ներկայացուցչության եւ Ներկայացուցչության աշխատակիցների արտոնություններ ու անձեռնմխելիությունը» /հոդվածներ 22-35/,
- III-V բաժինները եւ 22-35 հոդվածները համարել համապատասխանաբար IV-VI բաժիններ եւ 36-49 հոդվածներ,
- համաձայնագրի V բաժինը լրացնել նոր 411 հոդվածով:

Արձանագրության կիրառման կամ մեկնարանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդատվությունների եւ բանակցությունների միջոցով:

«2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

սին» համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9 հոդվածին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության իրավական կարգավիճակի մասին» համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**28 հոկտեմբերի 2008 թվականի
ՍԴ- 773**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 թՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԴՈՒՅԱՆՔԵՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «1992 թՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ
ԱՆՎԱԾՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՂԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԿՐՈՐԴ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳԱՏԱԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

28 հոկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարուրյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրանք նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբեում ստորագրված՝ «1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջեւ ուղղմատեխնիկական համագործակցության հիմնական

«ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԵՒՄԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

սկզբունքների մասին» համաձայնագրում լրացումներ կատարելու մասին երկրորդ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 09.09.2008թ.:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ.**

Երկրորդ արձանագրության նպատակը 2000 թվականի հունիսի 20-ին ստորագրված՝ «1992թ. մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջեւ ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին» համաձայնագրի եւ 2003թ. սեպտեմբերի 19-ին ստորագրված՝ 1992թ. մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջեւ ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին» համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին արձանագրության հիման վրա ռազմատեխնիկական համագործակցության հետագա կատարելագործումն է։ Երկրորդ արձանագրությունն ուղղված է նաև անդամ պետությունների հակաահարեկչական ներուժի զարգացմանը։

Երկրորդ արձանագրությունը նախատեսում է հետեւյալ փոփոխությունները եւ լրացումները։

- Համաձայնագրի 1-ին հոդվածի վեցերորդ պարբերությունը «ազգային գինված ուժերով» բառերից հետո լրացնել «, այլ զորքերով, զինվորական կազմավորումներով, իրավապահ մարմիններով եւ հատուկ ծառայություններով» բառերով։

- Համաձայնագրի 2-րդ հոդվածի առաջին պարբերությունը «ազգային գինված ուժերի» բառերից հետո լրացնել «, այլ զորքերի, զինվորական կազմավորումներով, իրավապահ մարմինների եւ հատուկ ծառայությունների» բառերով։

Քննության առնվող Արձանագրությունը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը։

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդ-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
վածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Բ Ո Շ Ե Ց**.

1. 2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբեում ստորագրված՝ «1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջեւ ուղղմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին» համաձայնագրում լրացումներ կատարելու մասին երկրորդ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**28 հոկտեմբերի 2008 թվականի
ՍՊ-774**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԴՈՒՇԱՆՔԵՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄՆԴԱՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱԳՐԵՄԱՅԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ
ԿԱՄ ԱԳՐԵՍԻՎՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ
ՈՎՉՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ
ՄԵԽԱՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՌՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

28 հոկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբեում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետություններին ազրեսիայի սպառնալիքի առաջացման կամ ազրեսիայի գործողության

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կատարման դեպքում ռազմատեխնիկական օգնություն ցուցաբերելու մեխանիզմի մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը՝ մուտքագրված 2008 թվականի սեպտեմբերի 9-ին:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետություններին ազրեսիայի սպառնալիքի առաջացման կամ ազրեսիայի գործողության կատարման դեպքում ռազմատեխնիկական օգնություն ցուցաբերելու մեխանիզմի մասին արձանագրությունը Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է ‘Դուշանբեում’ 2007 թվականի հոկտեմբերի 6-ին:

Արձանագրությունը հանդիսանում է Հավաքական անվտանգության մասին 1992 թվականի մայիսի 15-ի պայմանագրի 4-րդ հոդվածում նախատեսված անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու կարեւոր բաղադրամաս:

2. Արձանագրության նպատակն է ցանկացած Կողմի նկատմամբ ազրեսիայի սպառնալիքի կամ ազրեսիայի գործողության դեպքում անհրաժեշտ ռազմատեխնիկական օգնություն ցուցաբերելը եւ այդ նպատակով արդյունավետ մեխանիզմ մշակելը՝ հստակեցնելով այդ օգնության ցուցաբերման կարգն ու պայմանները:

3. Արձանագրության համաձայն Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես.

- կարճ ժամանակահատվածում ցանկացած Կողմին անհատույց կամ այլ արտոնյալ իիմունքներով տրամադրել ռազմատեխնիկական օգնություն այնպիսի իրավիճակի առաջացման դեպքում, որը Հավաքական անվտանգության խորհրդի կողմից կգնահատվի որպես նշված Կողմի դեմ ազրեսիայի ակտի իրականացման սպառնալիք, կամ, երբ մասնակից պետությունը ԱԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածին համապատասխան կիրառում է անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության իր իրավունքը, կամ, երբ մասնակից պետությունն ահարեկչության ակտի կամ իր ինքնիշխանությանը եւ տարածքային ամբողջականությանն սպառնացող այլ վտանգի օբյեկտ է դարձել:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Արձանագրության մեջ նշված են ռազմատեխնիկական օգնություն ցուցաբերելու կարգն ու պայմանները:

Ռազմատեխնիկական օգնություն ցուցաբերելու ֆինանսատնտեսական եւ այլ պայմանները կսահմանվեն յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով Կողմերի ունեցած հնարավորությունից:

4. Արձանագրությանը Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված սկզբունքներից:

Ելնելով գործի բննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետություններին ազրեսիայի սպառնալիքի առաջացման կամ ազրեսիայի գործողության կատարման դեպքում ռազմատեխնիկական օգնություն ցուցաբերելու մեխանիզմի մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**28 հոկտեմբերի 2008 թվականի
ՍՊ- 775**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-ԻՆ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱԳՅԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԲՑԵ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ.

Քաղ. Երեւան

7 նոյեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոփյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (գելուցող).

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրանք նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի հունվարի 12-ին Աստանայում ստորագրված՝ Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի դիմումն է ՀՀ սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով գելուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2006 թվականի հունվարի 12-ին՝ Աստանայում: Համաձայնագրի նպատակն է օժանդակել համաձայնագրի մասնակից պետությունների տնտեսական աճին եւ նրանց միջեւ առեւտրատնտեսական կապերի ընդլայնմանը:

2. Համաձայնագրին միացող պետությունները եւ միջազգային կազմակերպությունները Բանկի մասնակիցն են դառնում Բանկի խորհրդի որոշումների հիման վրա, որոնք ընդունվում են Կանոնադրությանը համապատասխան՝ Բանկի խորհրդի սահմանած կարգով համաձայնագրին միանալուց եւ ձեռք բերվող բաժնետոմսերի համար վճարելուց հետո:

3. Համաձայնագրի համաձայն՝ Բանկն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով ու նորմերով:

4. Համաձայնագրի բաղկացուցիչ մաս է կազմում հավելվածը, որն ամրագրում է Բանկի կանոնադրությունը:

5. Սույն համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

• մասնակցել Եվրասիական զարգացման բանկի կազմավորմանը,

• երաշխավորել, որ Բանկը ՀՀ տարածքում կօգտվի իրավաբանական անձի համար սահմանված իրավունքներից,

• Բանկի վրա չտարածել ՀՀ օրենսդրության այն դրույթները, որոնք սահմանում են կազմակերպությունների ստեղծման, արտոնագրման, դրանց գործունեության կանոնակարգման եւ դադարեցման կարգը,

• որպես Բանկի մասնակից՝ երաշխավորել Բանկի անձեռնմխելիությունը ցանկացած դատական հետապնդման նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք նրա լիազորությունների իրականացման հետեւանք չեն կամ կապված չեն այդ լիազորությունների իրականացման հետ,

• ապահովել Բանկի գույքի եւ ակտիվների անձեռնմխելիությունը խուզարկության, ռեկվիզիցիայի, կալանքի, բռնագրավման, սեփականագրկման կամ առզրավման ցանկացած այլ տեսակի կամ օտարման նկատմամբ՝ մինչեւ Բանկի նկատմամբ վերջնական դատական վճռի կայացումը,

• Բանկի ամբողջ գույքն ու ակտիվները գերծ պահել ամեն տեսակի սահմանափակումներից, կարգադրագրերից եւ մորատորիումներից այն չափով, որքանով անհրաժեշտ է Բանկի նպատակներին հասնելու եւ գործառույթներն իրականացնելու համար,

• ապահովել Բանկին պատկանող արիստվների, գույքի, ինչպես նաև ցանկացած տեղեկատվության անձեռնմխելիությունը,

• Բանկի պաշտոնական կապի համար տրամադրել ոչ պակաս բարենպատ պայմաններ, քան այն պայմաններն են, որոնք տրամադրվում են ցանկացած այլ ներկայացուցչության,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ապահովել Բանկի բոլոր լիազոր ներկայացուցիչների անձեռնմխելիությունը դատական եւ վարչական հետապնդման նկատմամբ՝ այն գործողությունների համար, որոնք իրականացվել են ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում,
- Բանկը, նրա եկամուտները, գույքը եւ մյուս ակտիվներն ազատել ցանկացած հարկից, տուրքից եւ այլ վճարումներից, ինչպես նաև ազատել հարկումից Բանկի աշխատակիցների աշխատավարձն ու պարզեւատրությունը,
- Բանկի խորհրդի որոշումը միջնորդ դատարանում վիճարկելու պարագայում դրա կողմից ընդունված որոշումը ճանաչել վերջնական եւ ՀՀ-ի համար պարտադիր:

6. Համաձայնագրով սահմանված են նաև կանոնադրական դրամագլխի չափը, Բանկի յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացուցիչ նշանակելու, ինչպես նաև քվեարկության իրականացման կարգը:

7. Համաձայնագիրը կարգավորում է նաև այն ուժի մեջ մտնելու, համաձայնագրից դուրս գալու, գործողությունը դադարեցնելու, փոփոխություններ եւ լրացումներ կատարելու, համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման հետ կապված տարածայնությունների լուծման կարգը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ռ Ո Շ Ե Յ**.

1. 2006 թվականի հունվարի 12-ին Աստանայում ստորագրված՝ Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**7 նոյեմբերի 2008 թվականի
ՄԴԱ-776**



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ ԲԲՅՈՒՏԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
ՄԻ ԿՈՂՄԻՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՅՈՒՄ
ԿՈՂՄԻՑ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՆԴԱՄ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԶԵՎ ԳՈՐԾԵՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՄԱԳՈՐԾՎԿՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆԱԳՐԻՆ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՄԵՆԻԱՅԻ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ
ԱՐՁԱՍՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

7 նոյեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի (գելուցող),

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրույց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հունիսի 27-ին Բրյուսելում ստորագրված՝ մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության և մյուս կողմից՝ Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև գործընկերության և համագործակցության համաձայնագրին Բուլղարիայի Հանրապետության և Ռումինիայի միանալու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

յաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիջը Հանրապետության Նախագահի՝ 09.10.2008թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Գ. Ղարիբջանյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը եւ գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Արձանագրությունն ստորագրվել է 2007 թվականի հունիսի 27-ին Բրյուսելում՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի (ԳՀՀ) գործողությունը Բուլղարիայի Հանրապետության եւ Ռումինիայի նկատմամբ տարածելու նպատակով:

2. Արձանագրությունը ԳՀՀ անքայտելի մասն է: ԳՀՀ-ն Եվրոպական միության հետ համագործակցության հիմունքները հաստատող գլխավոր փաստարդընը է:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը Բուլղարիայի Հանրապետության եւ Ռումինիայի նկատմամբ ստանձնում է այն նույն պարտավորությունները, որոնք ստանձնել է Եվրոպական միության մյուս անդամ պետությունների հանդեպ:

4. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես, արձանագրությունը հաստատել ներքին ընթացակարգերին համապատասխան, տեղեկացնել մյուս կողմերին այդ ընթացակարգերի ավարտի մասին, հաստատման փաստարդերն ի պահ հանձնել Եվրոպական միության խորհրդի գլխավոր քարտուղարությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. 2007 թվականի հունիսի 27-ին Բրյուսելում ստորագրված՝ մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության եւ մյուս կողմից՝ Եվրոպական համայնք-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ների ու դրանց անդամ պետությունների միջև գործընկերության եւ համագործակցության համաձայնագրին Բուլղարիայի Հանրապետության եւ Ռումինիայի միանալու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**7 նոյեմբերի 2008 թվականի
ՍՊ-777**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-ԻՆ՝ ԲԲՅՈՒՆԵԼՈՒՄ ԵՎ 2008

ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԺՈՂՈՎԻ ՄԻԶԵՎ

«ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ՝ ՄԱՍ II» ՖԻՆԱՆՍՎՈՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Բ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

7 նոյեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի (գեկուցող), Զ. Դուկայանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 և 72 հոդվածների,

դռնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի փետրվարի 7-ին՝ Բյուսելում եւ 2008 թվականի հուլիսի 7-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրոպական համայնքների համձնաժողովի միջեւ «Միջուկային անվտանգության 2007 թվականի գործողությունների ծրագրի՝ Մաս II» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջեւ «Միջուկային անվտանգության 2007 թվականի գործողությունների ծրագրի՝ Մաս II» ֆինանսավորման համաձայնագիրն ստորագրվել է 2008 թվականի փետրվարի 7-ին՝ Բյուսելում եւ 2008 թվականի հուլիսի 7-ին Երեւանում Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջեւ՝ «Միջուկային անվտանգության 2007 թվականի գործողությունների տարեկան ծրագրի՝ Մաս II» ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում իրականացվող ծրագրի եւ Ֆինանսավորման աջակցելու նպատակով:

2. Համաձայնագրի անբաժանելի մաս են կազմում հավելվածները:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- ստորագրել համաձայնագրի իրականացումն ապահովող պայմանագրեր՝ համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից երեք տարվա ընթացքում, ընդ որում, այդ վերջնաժամկետը չի կարող երկարացվել,

- բույլատրել Միջուկային անվտանգության 2007 թվականի գործողությունների տարեկան ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տարադրամի ներմուծումն ու գնումը, ինչպես նաև մրցույթին մասնակցող բոլոր կապալառուների նկատմամբ առանց խորականության կիրառել տարադրամի փոխանակման ներքին կանոնները,

- տրամադրել համաֆինանսավորում Եվրոպական համայնքների կողմից չֆինանսավորվող հարկերի, տուրքերի կամ այլ վճարումների համար, բացառությամբ հատուկ պայմաններով նախատեսված դեպքերի (ներառյալ ԱԱՀ կամ համարժեք հարկեր),

- կիրառել Եվրոպական համայնքների կողմից ֆինանսավորվող գնումների պայմանագրերի եւ դրամաշնորհների նկատմամբ ամենանվաստավոր հարկային եւ մաքսային պայմաններ՝ կիրառելի այլ պետությունների կամ զարգացման միջազգային կազմակերպությունների նկատմամբ:

4. Համաձայնագրում ուժի մեջ մտնելու ժամկետ է սահմանված վերջին Կողմի ստորագրման օրը, սակայն Հայաստանի Հանրապետության կող-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մից համաձայնագիրը ստորագրվել է վերապահումով՝ առ այն, որ Հայաստանի Հանրապետության համար համաձայնագիրն ուժի մեջ կմտնի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանք նախատեսված վավերացման ներքին ընթացակարգերի ավարտի մասին ծանուցումը Եվրոպական հանձնաժողովի կողմից ստանալու օրը:

5. Համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9 և 48 հոդվածներին եւ բխում են միջազգային փոխահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2008 թվականի փետրվարի 7-ին՝ Բրյուսելում եւ 2008 թվականի հուլիսի 7-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջև «Միջուկային անվտանգության 2007 թվականի գործողությունների ծրագրի՝ Մաս II» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**7 նոյեմբերի 2008 թվականի
ՍՊԸ-778**



ՀԱՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ԴՈՒՅԱՆՔԵՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՎԱՔՎԱԿԱՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Ո-ԱՉՄԱՏՆԵՄԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔԵՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԵՎ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄՏԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՆԿԱՏՎՄՔ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽՎԱԴԱՐՁ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳԱՍՏԱԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ՝

Քաղ. Երեւան

7 նոյեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Զ. Ղուկասյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գ. Բաղդալյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դրնբաց դատական նիստում գրավոր լնթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբեում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության շրջանակներում ռազմատնտեսական համագործակցության լնթացրում ստացված եւ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

օգտագործվող մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրում ամրագոված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 09.10.2008թ. ՀՀ ՍԴ նույթագրված դիմումը:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթորերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության շրջանակներում ռազմատնտեսական համագործակցության ընթացքում ստացված եւ օգտագործվող մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագիրն ստորագրվել է 2007թ. հոկտեմբերի 6-ին՝ Դուշանբե քաղաքում:

2008 թվականի հոկտեմբերի 9-ի դրությամբ համաձայնագիրն ստորագրել է 7 պետություն՝ Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ուստաստանը, Տաջիկստանը, Ուզբեկստանը:

Համաձայնագիրը նպատակ ունի ռազմատնտեսական համագործակցության ընթացքում ստացված եւ օգտագործվող մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների պաշտպանության ապահովման համար պայմաններ ստեղծել մասնակից պետությունների ազգային օրենտդրությանը համապատասխան:

2. Ըստ համաձայնագրի՝ բազմակողմ եւ /կամ/ երկկողմ ռազմատնտեսական գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների պաշտպանության ապահովումը, մասնավորապես, իրականացվում է.

- ստացված եւ օգտագործվող մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերի համաձայնեցմամբ,

- մտավոր սեփականության բնագավառում իրավախախտումների կանխման եւ խափանման ուղղությանք միջոցառումների իրականացմամբ,

- մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների պաշտպանության հարցերով փորձի եւ տեղեկատվության փոխանակմամբ,

- համաձայնեցված համագործակցություն այլ ձեւերով:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3. Ստացված եւ օգտագործվող մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքները բաշխվում են ռազմատնտեսական համագործակցության մասնակիցների կողմից կնքվող պայմանագրերով /կոնտրակտներով/ սահմանված պայմաններով։ Վերը նշված պայմանագրերում նախատեսվում է, որ մտավոր գործունեության ստացված եւ օգտագործվող արդյունքների կիրառումն իրականացվում է միայն դրանց իրավական պաշտպանության ապահովումից հետո։

Համաձայնագրի իրականացման համար յուրաքանչյուր մասնակից պետություն նշանակում է իր լիազորված մարմինը։ Հայաստանի Հանրապետության լիազորված մարմին է հանդիսանում ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունը։

2007 թվականի հոկտեմբերի 6-ին՝ Դուշանբեում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության շրջանակներում ռազմատնտեսական համագործակցության ընթացքում ստացված եւ օգտագործվող մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9 հոդվածին։

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**։

1. 2007 թվականի հոկտեմբերի 6-ին՝ Դուշանբեում ստորագրված՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության շրջանակներում ռազմատնտեսական համագործակցության ընթացքում ստացված եւ օգտագործվող մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ իրավունքների փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը։

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

7 նոյեմբերի 2008 թվականի
ՍՊ-779



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՎՄ ՇՄՎՊՈՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, «ՀԱՐԿԵՐԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 26-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ, «ՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ
ՄԱՍԻ, ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 115-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ ԵՎ 118-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳԱՅՆԱԿԱՆ
ՀԱՄԱԳԱՅՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾՎԱԾ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

25 նոյեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող).

մասնակցությամբ՝ դիմող՝ քաղաքացի Ա. Շմավոնյանի ներկայացուցիչ Գ. Դավթյանի, պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի օրենսդրության վերլուծության պետ Ա. Խաչատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69 հոդվածների,

դրա նիստում քանավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արամ Շմավոնյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի և 118-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Շմավոնյանի՝ 19.05.2008թ. դիմումն է սահմանադրական դատարան: Գործի դատաքննությունը երկու անգամ հետաձգվել է՝ մի դեպքում լրացուցիչ նյութեր ուսումնասիրելու նպատակով (16.09.2008թ.), մյուս դեպքում՝ պատասխանող կողմի միջնորդության հիման վրա (18.11.2008թ.):

Լսելով գործով գեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի բացատրությունները, հետազոտելով վեճի առարկա օրենսգրքերն ու օրենքները եւ գործում առկա մյուս փաստարդերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. հունիսի 28-ին եւ ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997թ. ապրիլի 14-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1997թ. մայիսի 12-ին եւ ուժի մեջ է մտել 1997թ. մայիսի 30-ից:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997թ. մայիսի 14-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1997թ. հունիսի 16-ին եւ ուժի մեջ է մտել 1997թ. հունիսի 1-ից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007թ. նոյեմբերի 28-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007թ. դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008թ. հունվարի 1-ից:

2. Ըստ գործի դատավարական նախապատմության՝ ՀՀ հարկային մարմինները դիմողին տուգանել են՝ առանց պետական գրանցման եւ համապատասխան լիցենզիայի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար: Տուգանք նշանակած՝ հարկային մարմնի համապատասխան ակտը դիմողի կողմից վիճարկվել է ՀՀ վարչական դատարանում: Վարչական դատարանն իր՝ 2008թ. մարտի 6-ի վճռով մերժել է ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության Արտաշատի տարածքային հարկային տեսչության՝ ՀՀ ԿԱ ՀՊԾ Արտաշատի ՏՀՏ-ի՝ 11.09.2007թ. ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին դիմողի հայցը: Վերջինս վարչական դատարանի վճիռը բողոքարկել է ՀՀ վճռաբեկ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱՎԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

դատարան, որը, դեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231, 233 և 234-րդ հոդվածներով, իր՝ 2008թ. ապրիլի 7-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է:

3. Դիմողն ի սկզբանե վիճարկել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ կետերի, 4-րդ կետի 3-րդ ենթակետի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115 և 118-րդ հոդվածների սահմանադրականությունը:

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմն իր՝ 03.06.2008թ. որոշմամբ դիմումը քննության է ընդունել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի և 118-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ:

4. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածը սահմանում է. «Զեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասը նախատեսում է. «Հարկային օրենսդրության կիրառման առումով ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում քաղաքացիների անձնական գույքի (ներառյալ նաև անշարժ) և իրերի օտարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Զեռնարկատիրական գործունեություն է համարվում շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով պարբերաբար իրականացվող տնտեսական գործունեությունը: Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որևէ ձեռվ կատարվող հատուցման դիմաց»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, եթե այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ նախատեսված չէ սույն օրենսգրքով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին մա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

սը սահմանում է. «Վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման կարգի, հիմքերի եւ գործերի վարույթը վճռաբեկ դատարանում իրականացնելու վրա (mutatis mutandis) տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը»:

5. Դիմողը, վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 31 հոդվածի 1-ին, 2-րդ, 33.1. հոդվածի 1-ին մասերին, 34 հոդվածին, 42 հոդվածի 2-րդ մասին, 45 հոդվածին, 8 հոդվածին եւ 98 հոդվածի 1-ին մասին, գտնում է, որ վիճարկվող դրույթներում ձեռնարկատիրական գործունեության սահմանումը, դրանում օգտագործվող առանձին հասկացությունների անորոշությունը տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք են տալիս, քանի որ չեն բացառում ցանկացած անձի գործունեությունն ինչպես ձեռնարկատիրական, այնպես էլ ոչ ձեռնարկատիրական համարելը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասության առնչությամբ դիմողը փաստարկում է, որ, ի տարբերություն ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված մյուս՝ քաղաքացիական եւ քրեական դատարանների, վարչական դատարանների ակտերն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից եւ բողոքարկման են ենթակա միայն վճռաբեկության կարգով, ինչի արդյունքում, ի խախտումն ՀՀ Սահմանադրության 14.1. հոդվածի, խտրական վերաբերմունք է դրսեւորվում անձանց միջև։ Դիմողը փաստարկում է նաեւ, որ առկա է հակասություն նաեւ վարչական դատավարության օրենսգրքի 115 եւ 118-րդ հոդվածների ու ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի միջև։ Այս կապակցությամբ դիմողը, մասնավորապես, պնդում է, որ. «Եթե վարչական դատարանը համարվում է առաջին ատյանի դատարան, ապա ելեկով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածից, այն պետք է լինի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան...»։

6. Պատասխանող կողմն ընդունելով, որ ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածով տրված օրինադրույթը բովանդակում է տվյալ գործունեությունը բնութագրող սահմանափակ հատկանիշներ, ինչի արդյունքում դրա մեկնաբանությունը չի կարող ամբողջությամբ բացահայտել «ձեռնարկատիրական գործունեություն» եզրույթի էությունը, միաժամանակ գտնում է, որ ձեռնարկատիրական գործունեության մասին դրույթը համակարգային առու-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

մով անհրաժեշտ է վերլուծել նաև հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ արտացոլված դրույթների շրջանակում: Մասնավորապես, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասից եւ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածից հետեւում է, որ անձի կողմից իրականացվող գործունեության բնույթը որոշելիս օրենսդրությամբ հատակեցրել է ձեռնարկատիրական գործունեության և տնտեսական գործունեության հարաբերակցության սահմանները, ինչպես նաև սահմանել է տնտեսական գործունեությունը բնութագրող պարտադիր հատկանիշները, որոնց առկայությունը բավարար հիմք կարող է համարվել հարկ վճարողին հարկային պարտավորություններ առաջադրելու համար:

Ինչ վերաբերում է «անձնական գույք» հասկացության բովանդակությանը, ապա այս կապակցությամբ ըստ պատասխանողի ներկայացուցչի՝ «սեփականության իրավունքով պատկանող» կամ «սեփական» գույքից «անձնական գույքի» տարրերակումը կարող է դրսեւորվել անձի կողմից անձնական կարիքների համար տվյալ գույքի անմիջականորեն եւ անհատապես օգտագործման միջոցով, ինչը բխում է ՀՀ Սահմանադրության 8-րդ, 31-րդ, 42-րդ եւ 45-րդ հոդվածների պահանջներից:

Վարչական դատավարության օրենսգրքի՝ դիմողի կողմից վիճարկվող դրույթների կապակցությամբ պատասխանողի ներկայացուցիչը նշում է, որ խորականության դրսեւորում առկա չէ, քանզի ինչպես նախկին, այնպես էլ գործող օրենսդրության մեջ կան նախադեպեր, երբ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ գործի շրջանակներում էական է, նախ՝ «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության սահմանադրական բովանդակության բացահայտումը: ՀՀ Սահմանադրության 33.1. հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք»: Այս ձեռակերպումից հետեւում է, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու անձի սահմանադրական իրավունքն է, եւ որ այդ գործունեության բովանդակությունը (հատկանիշները), իրականացման կարգն ու պայմանները ենքակա են օրենսդրական կարգավորման: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի համաձայն երաշխավորվում է տնտեսական գործունեության ազատությունը, սակայն այդպիսի գործունեության հասկացության նորմատիվ-իրավական բնորոշումը (հատկանիշները) ընթացիկ օրենսդրությամբ լիարժեք չի հստակեցված: Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

որն իրականացվում է որեւէ ձեւով կատարվող հատուցման դիմաց («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մաս): Զեռնարկատիրական գործունեության, որպես տնտեսական առանձին գործունեության, բովանդակության իրավական բնորոշումից բխում է, որ այն անձի՝ ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունն է, որի հիմնական նպատակը գույքի օգտագործումից, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է (ՀՀ քաղ. օրենսգրքի 2-րդ հոդված):

ՀՀ օրենսդրության վերլուծությունը միաժամանակ վկայում է, որ «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության բովանդակությունը բացահայտված է նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքում (26-րդ հոդված):

Նշված օրենքներում «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության վերաբերյալ դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ այդ հասկացությունն ունի հետեւյալ հատկանիշները:

- հանդիսանում է տնտեսական գործունեություն,
 - հետապնդում է շահույթ (եկամուտ) ստանալու նպատակ,
 - իրականացվում է ինքնուրույն եւ իր ռիսկով,
 - իրականացվում է որեւէ ձեւով կատարվող հատուցման դիմաց,
 - ենթակա է պետական գրանցման (առանձին դեպքերում՝ նաև լիցենզավորման),
 - չի ներառում քաղաքացիների անձնական գույքի (ներառյալ նաև անշարժ) եւ իրերի
- օտարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,
- իրականացվում է պարբերաբար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը հնարավորինս ամրագրել է «ձեռնարկատիրական գործունեությունը» բնութագրող նվազագույն հատկանիշները՝ չբացառելով լրացնուիլ հատկանիշների ներառումը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներից է բխում ՀՀ քաղաքացիական օրենսգրքում «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության հիմնական բնորոշման եւ այլ օրենքներում այդպիսի գործունեության առանձնահատկությունների բացահայտման իրողությունը: Սակայն նույնպիսի մոտեցում «տնտեսական գործունեություն» հասկացության բնորոշման առնչությամբ չի դրսեւորված:

Միաժամանակ, օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնարավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է «ձեռնարկատիրական գործունեություն» հաս-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կացության եւ դրան բնորոշ հատկանիշների բովանդակության բացահայտմանը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, գործելով ՀՀ Սահմանադրության 92 հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանված իր սահմանադրախրավական գործառույթի, այն է՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթի եւ այդ գործառույթն իրականացնելիս՝ իրավունքի զարգացմանը նպաստելու իրավասության շրջանակներում, իր թիվ 3-1161 (ՏԴ) որոշման մեջ մեկնաբանել է խնդրո առարկա հասկացության օրենսդրական բովանդակությունը՝ ըստ էության որոշակիացնելով դրա հատկանիշների շրջանակը: ՀՀ վճռաբեկ դատարանի նշված որոշման միջոցով ՀՀ օրենսդրության մեջ, մասնավորապես, դիմողի կողմից վիճարկվող օրենքների համապատասխան դրույթներում, «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացությունը միատեսակ կիրառման առումով ավելի ամբողջական եւ լիարժեք բնույթ է ստացել՝ հնարավորություն տալով համապատասխան տնտեսավարող սուբյեկտներին կանխատեսել իրենց վարքագծի իրավական հետեւանքները:

Ըստ որում, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի ... դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ ...»:

ՀՀ դատական օրենսգրքի նշված դրույթին համահունչ՝ դիմողի նկատմամբ կայացված՝ ՀՀ վարչական դատարանի 2008թ. մարտի 6-ի վճռում վարչական դատարանը դիմողի գործունեությունը որպես ձեռնարկատիրական գործունեություն գնահատելիս առաջնորդվել է ոչ միայն վիճարկվող օրենքների դրույթներով, այլ նաև վճռաբեկ դատարանի կողմից վերոհիշյալ որոշմամբ ձեռնարկատիրական գործունեության հասկացութային մեկնաբանմամբ:

Ինչ վերաբերում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում «պարբերաբար» բառի իրավական անորոշությանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ այս բառի բովանդակությունը ենթակա է գնահատման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից: Բացի դրանից, «գործունեություն» հասկացությունն ինքնին ենթադրում է գործողությունների շարունակական իրականացում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության իմաստով պարբերականությունն առանձին երկրների օրենսդրական պրակտիկայում նկարագրվում

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Է նաեւ թվային չափանիշների միջոցով: Սակայն նման մոտեցումն ունի նաեւ իր բարդությունները: ՀՀ օրենսդրության մեջ «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության իմաստով պարբերականությունը թվային չափանիշների միջոցով արտահայտելը կստեղծի մի իրավիճակ, երբ, կախված գործի առանձնահատկություններից ու կոնկրետ հանգամանքներից, միևնույն թվաքանակով իրականացված գործարքները մի դեպքում կարող են համարվել ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում կատարված, մյուս դեպքում՝ ոչ:

Վիճարկվող օրենսդրական դրույթների եւ դրանց իրավակիրառական պրակտիկայի համադրված վերլուծության արդյունքներով սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանց բովանդակությունն այնպիսին է, որ իհմնականում չի առաջացնում իրավական անորոշություն, եւ դրանք իրենց ամբողջության մեջ հնարավորություն են տալիս իրավասությեկտին կանխատեսելու իր վարքագծի իրավական հետեւանքները: Այսուհանդեռձ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովը, հաշվի առնելով նաեւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջները, պետք է դատական պրակտիկան հաշվի առնելով առավել հստակություն մտցնի «ձեռնարկատիրական գործունեության» եւ «տնտեսական գործունեության» հասկացությունների՝ հատկապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առավել ամբողջական եւ միասնական օրենսդրական ձեւակերպման հարցում, հնարավորինս բացառելով տարարնույթ մեկնարանություններն ու կոռուպցիոն ռիսկը:

8. ՀՀ Սահմանադրության 33.1. հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի՝ օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ գրադելու իրավունքը: Այդ իրավունքը ներառում է բոլոր իրավական հնարավորությունները, որոնք անհատի համար նախապայմաններ են ստեղծում ինքնուրույնաբար որոշումներ ընդունելու իր տնտեսական գործունեությանն առնչվող հարցերով: Այդ իրավունքը ենթադրում է արդարացի մրցակցության ազատություն, առանց սահմանափակումների տնտեսական կազմակերպություններ ձեւավորելու, իր գործունեության բնույթն ու ձեւը փոխելու, գոյություն ունեցող տնտեսական կազմակերպությունները լուծարելու, պայմանագրեր կնքելու հնարավորություններ: Ձեռնարկատիրական գործունեության իրավունքի անբաժանելի քաղադրատարքն է կազմում նաեւ ձեռնարկատիրական գործունեությամբ գրադելու ցանկություն ունեցող անձի՝ առանց արհեստական խոշընդոտների շուկա մտնելու եւ, ցանկության դեպքում, այդ շուկայից դուրս գալու հնարավորությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթները՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնարանությամբ՝

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի պահանջները, որեւէ կերպ չեն կարող խոչընդոտել ձեռնարկատիրական գործունեության սահմանադրական իրավունքի իրացմանը:

9. ՀՀ դատական օրենսգրքի հիման վրա վարչական դատարանի ստեղծմանը եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ընդունմանը Հայաստանի Հանրապետությունում 2008թ. հունվարի 1-ից ներդրվեց նաև նախագիտացված վարչական արդարադատության ինստիտուտը: Համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի՝ վարչական դատարանը հանդիսանում է մասնագիտացված առաջին ատյանի դատարան, որն ըստ էության քննում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը: Ի տարբերություն ՀՀ դատական օրենսգրքով ստեղծված մյուս, այսպես կոչված, մասնագիտացված՝ քրեական եւ քաղաքացիական առաջին ատյանի դատարանների, վարչական դատարանի ակտերի բողոքարկման վերաբնիշ ատյան նախատեսված չել վարչական դատարանի ակտերը կարող են բողոքարկվել միայն վճռաբեկության կարգով:

Վարչական դատարանում վարչական գործերով դատավարության կարգը սահմանվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով եւ ՀՀ դատական օրենսգրքով: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ վարչական գործերով դատավարության կարգը վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում սահմանվում է նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով՝ այնքանով, որքանով դրա նորմերը իրենց էությամբ կիրառելի են (“mutatis mutandis”) վարչական դատավարության նկատմամբ եւ չեն հակասում վարչական դատավարության օրենսգրքին եւ վարչական դատավարության էությանը:

Վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է վարչական դատավարության սկզբունքները: Առանձին սկզբունքներ էականորեն տարբերվում են քաղաքացիական դատավարության սկզբունքներից, մասնավորապես, օրենսգրքի 6-րդ հոդվածն ամրագրում է գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքը, որը վարչական դատավարությանը բնորոշ կարեւորագույն սկզբունքներից մեկն է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Գործի քննությունը եւ լուծումը վարչական դատարանում» վերտառությամբ 2-րդ բաժնի 11-19-րդ գլուխներում կանոնակարգվում է վարչական դատարանում գործի քննության կարգը. նշված գլուխներում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգավորումներին հղում է կատարվում միայն 88, 89, 98, 112 եւ 117-րդ հոդվածներում, որոնք համապատասխանաբար վե-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՒԽ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

բարերում են հայցի ապահովման միջոցների կիրառմանը, գործի վարույթը վերսկսելուն, գործի քննությունը հետաձգելուն, դատական ակտի կայացմանը, դատական նիստի արձանագրմանը: Մինչդեռ ՀՀ վճռաբեկ դատարանում վարչական գործերի վարույթին վերաբերում է միայն 20-րդ գլուխը՝ բաղկացած միայն 118-րդ հոդվածից, որը վարչական դատարանի դատական ակտերի եւ՝ բողոքարկման կարգի, եւ՝ հիմքերի, եւ՝ գործերի վարույթը վճռաբեկ դատարանում իրականացնելու առնչությամբ հղում է կատարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վճռաբեկ վարույթը կանոնակարգող նորմերին: Ըստ որում, հարկ է նկատել, որ նշված գլուխը ներառված է «Գործի քննությունը եւ լուծումը վարչական դատարանում» վերտառությամբ 2-րդ բաժնում: Փաստորեն, լուրջ վերապահությամբ պետք է մոտենալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածով նախատեսված նպատակի իրացմանը, համաձայն որի՝ «Սույն օրենսգիրքը սահմանում է վարչական դատարանում եւ վճռաբեկ դատարանում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական եւ նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը»:

Իրականում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 118-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմի իրավական բովանդակությունն ու էությունը կայանում են նրանում, որ այդ նորմն ուղղակիորեն վարչական արդարադատության ոլորտի նկատմամբ տարածում է վճռաբեկ վարույթի այն բոլոր կանոնները, որոնք կիրառվում են քաղաքացիական արդարադատության եռաստիճան համակարգում: Այսինքն՝ վճռաբեկ վարույթը կարգավորող՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը նույնակերպ վերարտադրվում են վարչական դատավարության օրենսգրքում: Ինչ վերաբերում է այդ նորմում «mutatis mutandis» վերապահման կիրառմանը, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ վերապահումը որեւէ կերպ չի փոփոխում վարչական դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու հիմքերի կամ պայմանների, վճռաբեկ դատարանում վարչական դատարանի դատական ակտի դեմ բերված վճռաբեկ բողոքի քննության կարգը եւ այդ կապակցությամբ վճռաբեկ դատարանի իրավասության շրջանակը:

10. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ դիմողի կողմից վիճարկվող հոդվածների, ինչպես նաև 9, 119, 120, 121 եւ 122-րդ հոդվածների,

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ դատական օրենսգրքի 35, 36 և 39-րդ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքները վկայում են, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկման իրավակարգավորմանը բնորոշ հիմնական տարրերն են.

- վարչական դատարանի ակտերն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից եւ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չեն,

- վարչական դատարանի ակտերը ենթակա են բողոքարկման միայն վճռաբեկության կարգով,

- վարչական դատարանի ակտերը, վերաքննության կարգով բողոքարկման հնարավորության բացակայության պայմաններում, վճռաբեկության կարգով կարող են բողոքարկել այն նույն հիմքերով, որոնցով բողոքարկման են ենթակա նաև քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտերը,

- վարչական դատարանի ակտի դեմ ուղղված վճռաբեկ բողոքը քննության ընդունելու պայմանները նույն են, ինչ քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների ընդունելության պայմանները,

- վճռաբեկ դատարանը վարչական դատարանի ակտի դեմ բերված վճռաբեկ բողոքը քննում է նույն սահմաններում եւ այդ կապակցությամբ իրացնում է նույն լիազորությունները, ինչ քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ բերված բողոքների պարագայում,

- վճռաբեկ դատարանի կողմից վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բեկանելու եւ գործը նոր քննության վերադարձնելու դեպքում վարչական դատարանը հարուցում է գործի նոր քննության վարույթ՝ այդ մասին կայացնելով միջանկյալ ակտ:

11. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը, հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 7-րդ մասի պահանջները, անհրաժեշտ է համարել պարզել.

- արդյո՞ք վարչական դատարանի ակտերի բողոքարկման ներկա իրավակարգավորումն ունակ է ապահովելու վարչական արդարադատության ոլորտում անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը,

- արդյո՞ք վճռաբեկ դատարանում վարույթի առնչությամբ ընդհանուր հղումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի չորոշակիացված նորմերին՝ անգամ «mutatis mutandis» վերապահումով, համապատասխանում է օրենքի որոշակիության սկզբունքին,

- արդյո՞ք օրենսդրի տարրերակած մոտեցումն առաջին ատյանի տարրեր մասնագիտացված դատարանների հանդեպ իր հիմքում ունի որոշակի օբյեկտիվ արդարացում:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

12. ՀՀ սահմանադրական դատարանն իր 2008թ. սեպտեմբերի 9-ի ՍԴՈ-758 որոշման մեջ, անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 92 հոդվածին, մասնավորապես նշել է, որ օրենսդիրն ազատ է մասնագիտացված դատարանների պարագայում սահմանելու վերաբննիչ ատյան: Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում հարկ է համարում Սահմանադրության 92 հոդվածի նշված մեկնաբանությունը դիտարկել ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներում անրագրված՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների համատեքստում: Այս սահմանադրական դրույթների համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև օրենսդիրի հայեցողությանն է թողնված վարչական արդարադատության շրջանակներում վերաբննիչ ատյանի ստեղծման հարցի լուծումը, այնուամենայնիվ, օրենսդիրն իր այս հայեցողությունն իրացնելիս պետք է առաջնորդվի մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, տվյալ դեպքում՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ պաշտպանության և այդ իրավունքի կարեւոր քաղաքրիչներից մեկի՝ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հետեւողականորեն արտահայտվում է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաբննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծել են, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում եւս օգտվեն 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներից: Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ Եվրոպական դատարանի կողմից կիրառվող՝ Կոնվենցիայի մեկնաբանության կարեւորագույն սկզբունքներից մեկը՝ Կոնվենցիայի արդյունավետ մեկնաբանության սկզբունքը իր հերթին պահանջում է, որ յուրաքանչյուր իրավունք մեկնաբանվի և կիրառվի այնպես, որ դրանք լինեն ոչ թե տեսական կամ երեւակայական, այլ գործնական և արդյունավետ իրավունքներ: Այս սկզբունքային դիրքորոշումն ուղակիորեն կամ անուղղակիորեն արտահայտված է Եվրոպական դատարանի բազմաթիվ վճիռներում:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, իր հերթին, մեծապես կարեւորելով վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողությունը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության էա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կան տարր, 2004թ. դեկտեմբերի 15-ին ընդունել է Վարչական ակտերի դատական վերահսկողության վերաբերյալ (2004) 20 հանձնարարականը: Վերջինս իր 4-րդ (i) կետում ամրագրում է. «Վարչական ակտը վերանայող դատարանի որոշումը պետք է, զոնե կարեւոր գործերում, ննթակա լինի բողոքարկման վերադաս ատյան, բացառությամբ այն դեպքերի, երբ գործը, ներպետական օրենսդրությանը համապատասխան, ուղղակիորեն տրվում է վերադաս ատյանին»: Հանձնարարականը նաև ամրագրում է.

- Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ապահովեն, որ պեսզի իրենց երկրի դատարանակազմությունը եւ դատական ընթացակարգերը համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներին, որպեսզի երաշխավորվի վարչական ակտերի նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը,

- դատական ակտը բողոքարկելու իրավունքը պետք է ճանաչվի յուրաքանչյուր անդամ պետությունում:

Հանձնարարականի բացատրական հուշագրում մասնավորապես նշված է, որ ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի բողոքարկման պայմանները եւ բողոքարկման մարմնի իրավազորությունը, որոնք պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին: Վարչական վարույթում վերադաս դատական ատյանի ներգրավումն էական նշանակություն ունի վարչական նախադեպային իրավունքի հետեւողականությունն ապահովելու հարցում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև նշված հանձնարարականը չի ճշգրտում երկաստիճան վարույթի բաղկացուցիչ տարրերը՝ վերաբննիչ կամ վճռաբեկ ատյանների միջեւ ընտրության հարցի լուծումը բողնելով անդամ պետությունների հայեցողությանը, այնուամենայնիվ, ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հետեւողականորեն կիրառվող՝ իրավունքների արդյունավետ մեկնարանության սկզբունքը, այնպես էլ հանձնարարականի նպատակն ու առարկան ուղղված են նրան, որ վարչական արդարադատության ոլորտում դատական երկաստիճան համակարգը լինի այնքան կենսունակ եւ արդյունավետ, որ կարողանա ապահովել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը եւ նվազագույնի հասցնի դատական սխալների հավանականությունը:

13. Հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի վերոհիշյալ իրավական չափությունները՝ քննության առարկա գործի շրջանակներում սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական արդարադատության ոլորտում անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

տուրքունն առաջին հերթին պայմանավորված է ՀՀ վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մատչելիությամբ եւ դրա արդյունավետությամբ, նաև ավելացնելով վարչական դատարանի դատական ակտերի բողոքարկման միակ ատյանի՝ վճռաբեկ ատյանի մատչելիությամբ եւ արդյունավետությամբ:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում վարչական արդարադատության ոլորտում վճռաբեկ դատարանի՝ որպես բողոքարկման միակ ատյանի մատչելիությունն ու արդյունավետությունն առաջին հերթին գնահատել վարչական դատարանի ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու հիմքերի եւ վճռաբեկ բողոքը ընդության ընդունելու պայմանների համատեքստում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական արդարադատության երկաստիճան համակարգի պարագայում, եթք վերաքննիչ վարույթը բացակայում է, այս գործուն էլ ավելի որոշիչ եւ էական դերակատարում է ձեռք բերում ոչ միայն վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի, այլ նաև մասնագիտացված վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մատչելիության եւ արդյունավետության ապահովման տեսանկյունից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 118-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը, հաշվի չառնելով վարչական արդարադատության, հանրային-իրավական վեճերի լուծման առանձնահատկությունները, քաղաքացիական դատավարության եռաստիճան համակարգում կիրառվող՝ վճռաբեկության ինստիտուտի իրավակարգավորման բոլոր տարրերը, այդ թվում՝ նաև վճռաբեկ բողոքի հիմքերն ու ընդունելիության պայմանները, ինչպես նշվեց, տարածել է վարչական դատարանի ակտերի բողոքարկման վրա: Եթե վճռաբեկ բողոք բերելու՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերն ու բողոքի ընդունելիության պայմանները, պայմանավորված վճռաբեկ դատարանի սահմանադրախրավական գործառույթներով, եռաստիճան համակարգում իրավաչափ են ու ողջամիտ, ինչպես դա ընդունել է սահմանադրական դատարանն իր՝ 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման մեջ, ապա երկաստիճան համակարգի պարագայում նշված գործոնները բողոքարկման միակ՝ վճռաբեկ ատյանի մատչելիությունը եւ արդյունավետությունը սահմանափակում են այնքան, որ խարարվում է դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը՝ բացասաբար անդրադառնալով նաև վարչական արդարադատության համակարգի կենսունակ գործունեության վրա:

Սահմանադրական դատարանն իրավաչափ չի համարում վերաքննիչ վարույթի բացակայության պայմաններում վարչական դատարանի ակտերի դեմ վճռաբեկ բողոքի առնչությամբ այն նույն հիմքերի եւ ընդունելիության վրա:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Քյան պայմանների սահմանումը, որոնք կիրառվում են քաղաքացիական արդարադատության եռաստիճան համակարգում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատավարության մասնակիցների կողմից վարչական դատարանի ակտը վճռաբեկ դատարան բողոքարկելու կարգը, ներառյալ՝ վճռաբեկ բողոքի թույլատրելիության հիմքերը, ինչպես նաև վճռաբեկ վարույթի կարգն այդ գործերով, պետք է սահմանվեն վարչական դատավարության օրենսգրքով՝ հղումներ պարունակելով այլ օրենքներին միայն այն դեպքերում, եթե դրանք դուրս չեն գալիս դատական համակարգի ընդհանուր սահմանադրական սկզբունքների շրջանակներից: Նման մոտեցումը բխում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի եւ 2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:

Ելեկով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 118-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթը ոչ միայն սահմանափակում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը, այլ նաև չի բավարարում իրավական օրենքին ներկայացվող հստակության, ճշգրտության եւ կանխատեսելիության որակները:

Միաժամանակ, ընդունելով, որ ՀՀ դատական օրենսգրքով ստեղծված տարեր մասնագիտացված առաջին ատյանի դատարանների միջեւ՝ վարչական դատարանի ակտերի վերաբնության կարգով բողոքարկման հնարավորություն չնախատեսելու առումով տարբերակված մոտեցումն իր հիմքում ունի որոշակի օբյեկտիվ արդարացում, այն է՝ վարչական դատարանի քննությանը ենթակա գործերի բնույթը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման տարբերակված մոտեցումը պահանջում է նաև տարբերակված մոտեցում վարչական ակտերի վճռաբեկության կարգով բողոքարկման իրավակարգավորումը սահմանելիս:

14. Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ վարչական արդարադատության առկա երկաստիճան համակարգի անարդյունավետությունը պայմանավորող գործոն է հանդիսանում նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 115-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված այն դրույթը, որի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Դատական ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքն իրավական հիմք է հանդիսանում այդ ակտի կատարման, այդ թվում հարկադիր կատարման գործընթաց նախաձեռնելու համար: Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ կատարողական բերք տրվում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ դիմումն ստանալու օրվանից

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Եռօրյա ժամկետում: Վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված է եռամյա ժամկետ: Այսինքն՝ գործնականում հնարավոր է, որ մինչեւ վճռաբեկ բողոք բերելը վարչական դատարանի ակտն արդեն կատարված լինի: Նման պայմաններում վճռաբեկության կարգով բողոքարկումը կարող է դառնալ իմաստազորկ և բացառել բողոքարկող կողմի համար անդառնալի բացասական հետեւանքները կանխելու հնարավորությունը՝ դրանով իսկ պայմանավորելով վճռաբեկ դատարանի՝ որպես բողոքարկման միակ ատյանի, անարդյունավետությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմից իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ իրավունքի գերակայության բաղադրատարերից է իրավական որոշակիության սկզբունքը, որն իր հերթին ենթադրում է res judicata սկզբունքի հարգում: Վերջինս էլ նշանակում է, որ որեւէ կողմ իրավասու չէ պահանջել վերջնական եւ կատարման ենթակա վճռի վերանայում պարզապես գործը կրկին քննելու եւ վեճը նորից լուծելու նպատակով: Գործը վերանայելու՝ վերադաս դատարանի իրավասությունը պետք է իրականացվի դատական սխալները եւ արդարադատության իրականացման արդյունքում տեղ գտած թերությունները շտկելու, այլ ոչ թե նոր քննություն սկսելու նպատակով: Վերջնական եւ կատարման ենթակա դատական ակտի վիճարկումը թույլատրելի է միայն էական եւ անհետաձգելի հանգամանքների դեպքում (տես, մասնավորապես, Ռյարիխն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով 2003թ. հուլիսի 24-ի վճիռը):

Նշված իրավական դիրքորոշմանը համահունչ կարգավորում է նախատեսված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածում, որի համաձայն՝ ընդիհանուր իրավասության դատարանների եւ քաղաքացիական դատարանի՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած ակտի դեմ բերված վերաբնիշ բողոքը կարող է ընդունվել քննության այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խարարում է արդարադատության բուն էությունը:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկումը վճռաբեկ դատարան այնպիսի պայմաններում, երբ վարչական դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում իրապարակման պահից, ոչ միայն վճռաբեկ դատարանում իրավունքի պաշտպանությունը դարձնում է անարդյունավետ, այլ նաև խախտում է իրավական որոշակիության եւ անվտանգության սկզբունքները, որոնք հանդիսանում են ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ծում ամրագրված՝ իրավական պետության հիմնարար սկզբունքի բաղադրիչները:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ իրավական պետությունում, որպես կանոն, անքույլատրելի է ցանկացած դատական սխալի առկայության հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայումը: Դրանով ինաստագրվում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու գաղափարը, որի էությունն այդ ակտերին հնարավոր կայունություն հաղորդելու եւ դրանց անփոփոխելիության հանդեպ դատավարության կողմերի վստահությունը պաշտպանելու մեջ է:

Սահմանադրական դատարանը որպես վարչական արդարադատության երկաստիճան համակարգի մատչելիության եւ արդյունավետության վրա ազդող գործոն է դիտարկում նաև այն հանգամանքը, որ ի տարբերություն վերաբննիշ բողոքը վերադարձնելու մասին վերաբննիշ դատարանի որոշման, վճռարեկ դատարանի՝ վճռարեկ բողոքը վերադարձնելու որոշումը բողոքարկելու հնարավորություն օրենսդրությամբ նախատեսված չէ: Այսինքն՝ այն դեպքում, եթե վճռարեկ բողոքը վերադարձվում է, անձը զրկված լինելով այն բողոքարկելու հնարավորությունից, ըստ էության ոչ միայն զրկվում է նման որոշման դեմ պաշտպանության միջոցից, այլ նաև նրա գործի քննությունը փաստացիորեն սահմանափակվում է միայն առաջին ատյանի դատարանի շրջանակներում:

15. Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴ-765 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածներին հակասող է ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այն դրույթները, որոնք թույլ էին տալիս վճռարեկ բողոք ներկայացնել միայն վճռարեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ նշված որոշման եզրափակիչ մասի 7-րդ կետի ուժով այդ դրույթները ժամանակավորապես պահպանում են իրենց ուժը, սահմանադրական դատարանը որպես վարչական գործերով վճռարեկ ատյանի մատչելիությունը պայմանավորող գործոն է համարում նաև վարչական արդարադատության երկաստիճան համակարգում բողոքարկման միակ ատյան դիմելու համար հավատարմագրված փաստաբանի ծառայությունից օգտվելու պարտադիր պահանջը: Նման պահանջի առկայությունը երկաստիճան դատական համակարգում էլ ավելի է խարարում դատական պաշտպանության արդյունավետ իրավունքի էությունը, քանզի, եթե եռաստիճան համակարգում անձը վերաբննիշ ատյանում օգտվում է անմիջական բողոքարկման հնարավորությունից, ապա վարչական արդարադատության ոլորտում անմիջական բողոքարկման հնարավորությունն ամբողջովին բացակայում է:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

16. Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլոց, նպատակ է հետապնդում առաջին հերթին դատավորների մասնագիտացման միջոցով ապահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը եւ լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմանը: Մասնագիտացված դատարանների ստեղծումը բխում է հասարակական կյանքի առանձին ոլորտներում առաջացող հարաբերությունների կապակցությամբ պատշաճ արդարադատություն իրականացնելու պահանջից: Դատավորները մասնագիտանում են որոշակի կատեգորիայի գործերով արդարադատության իրականացման մեջ, եւ այս դեպքում դատական սխալի հավանականությունն ավելի փոքր է: Հետեւաբար, այդ ինստիտուտի բնականոն եւ լիարժեք կենսագործունեությունը պահանջում է, որպեսզի մասնագիտացման գործոնը հստակ արտահայտված լինի տվյալ տեսակի գործերի բնության իրավասությամբ օժտված բոլոր դատական առյաններում:

Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վարչական մասնագիտացված արդարադատության ոլորտում անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն բողոքարկման միակ ատյանի՝ վճռաբեկ դատարանի մատչելիությամբ եւ արդյունավետությամբ, այլ այդ իրավունքի արդյունավետությունը պայմանավորող կարեւոր հանգամանք է նաև վճռաբեկ դատարանում մասնագիտացման գործոնի լիարժեք դրսեւորումը: Մասնագիտացման գործոնը վճռաբեկ դատարանում կարող է ունենալ երկու հիմնական դրսեւորում, այն է՝ գործերի բննությունը մասնագիտացված առանձին միավորի կողմից, եւ երկրորդ՝ գործերի բննության կազմակերպումը վարչական արդարադատության առանձնահատկություններին համապատասխան: Մինչդեռ վճռաբեկ դատարանում վարչական գործերի բննության կապակցությամբ մասնագիտացման գործոնի նշանակած երկու դրսեւորումներն ել որեւէ կերպ արտահայտված չեն:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածը, մատնանշելով ՀՀ վճռաբեկ դատարանի պալատները եւ ընդհանուր գծերով սահմանելով ՀՀ վճռաբեկ դատարանի ներքին կառուցվածքը, կատարել է ոչ միայն կառուցվածքային, այլ նաև գործառությային տարածատում: Վճռաբեկ դատարանի ներքին կառուցվածքի կանխորոշումը սահմանադրի կողմից՝ այդ դատարանի պալատների առանձնացումը, նշանակում է այդ պալատներից յուրաքանչյուրին արդարադատություն իրականացնելու հատուկ լիազորության տրամադրում: Մինչդեռ ՀՀ դատական օրենսգիրքը (հոդվածներ 18 եւ 53), հաշվի չառնելով այդ հանգամանքը, վճռաբեկ դատարանի

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

պալատների լիազորություններն ու գործառույթը սահմանափակել է միայն վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցի լուծմամբ։ Վճռաբեկ դատարանը բողոքի կապակցությամբ ըստ էության որոշում է կայացնում լիազումար կազմով, որտեղ պալատը հանդես չի գալիս որպես մասնագիտացված միավոր։ Վարչական դատարանի ակտերի դեմ բերված բողոքների առնչությամբ ըստ էության որոշումներն ընդունվում են քրեական պալատի եւ քաղաքացիական ու վարչական պալատների դատավորների մասնակցությամբ։ Նման պայմաններում, վճռաբեկ դատարանում վարչական գործերով արդարադատությունը գրկվում է իր առարկայական բնույթից։

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մասնագիտացված վարչական դատարանի ակտերը չեն կարող վերանայվել մի դատարանի կողմից, որը չունի մասնագիտացված համապատասխան դատական կազմ։ Սահմանադրության մեջ վճռաբեկ դատարանի պալատների գոյության երաշխիքի ամրագրումը կիմաստավորվի միայն այն դեպքում, եթե վճռաբեկ դատարանն ունենա լիարժեք, այն է՝ գործն ըստ էության քննող եւ լուծող մասնագիտացված համապատասխան պալատ։ Մասնագիտացման գործնը վճռաբեկ վարույթում բացակայելու արդյունքում վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, հետեւաբար նաև՝ վարչական արդարադատության ոլորտում անձի դատական պաշտպանության իրավունքն իր ամբողջության մեջ խաթարվում է եւ գրկվում արդյունավետությունից։

17. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ մասնագիտացված վարչական արդարադատության ինստիտուտի անկատարությունը կայանում է ոչ միայն նրանում, որ մասնագիտացման գործնը որեւէ դրսեւորում չի ունեցել վարչական դատարանի ակտերի բողոքարկման ատյանում։ Համակարգային անկատարությունը դրսեւորվում է նաև օրենսգրքի 135-րդ հոդվածում։

ՀՀ Սահմանադրությունը տարբերակում է սահմանադրական եւ ընդհանուր արդարադատության գործառույթը՝ սահմանադրական արդարադատության գործառույթը՝ 93-րդ հոդվածով ուղղակիորեն վերապահելով սահմանադրական դատարանին։ Սահմանադրությամբ նախանշված նման տարանջատումը սահմանադրական եւ ընդհանուր արդարադատության գործառույթների միջև ապահովում է արդարադատության ողջ համակարգի գործառնական դինամիկ հավասարակշռությունը։ Ընդ որում, սահմանադրական դատարանին է իրավասություն վերապահված սահմանադրական արդարադատության միջոցով ապահովել ՀՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությու-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Այս հերթին, վարչական արդարադատության մասնագիտացված մարմինը կոչված է ապահովելու վարչական մարմինների գործունեության օրինականությունը՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական եւ նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման, ինչպես նաև ֆիզիկական եւ իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների եւ պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության միջոցով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի եւ 2, 9, 19, 118, 119, 122, 123, 125, 128, 141 եւ 156-րդ հոդվածների փոխկապակցված համադրումից, ինչպես նաև իրավակարգավորման առարկայի առնչությամբ 1-ին, 128 եւ 135-րդ հոդվածների համադրումից ակնհայտ է դառնում, որ ոչ միայն խնդիրներ են առաջացել վարչական արդարադատության վերահսկելի եւ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից արդյունավետ ընթացակարգ սահմանելու առումով, այլև, հաշվի չառնելով ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի միանշանակ պահանջը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետով վարչական արդարադատության ոլորտ է ներառվել սահմանադրական արդարադատության առարկան:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական եւ սահմանադրական արդարադատության առկա շփոթն իրավակիրառական պրակտիկայում կարող է ստեղծել սահմանադրական նորմերի մեկնաբանման տարակերպ մոտեցումներ, որը լուրջ վտանգ է ներկայացնում երկրում Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության պահովման եւ հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միասնական քաղաքականության իրականացման համար: Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա իրավակարգավորումը չի բխում նաև ՀՀ Սահմանադրության 1, 3, 5, 6, 92 եւ 94-րդ հոդվածների պահանջներից եւ երկրի իրավական անվտանգության սպառնալիք է իր մեջ պարունակում:

Սահմանադրական դատարանը՝ նկատի ունենալով, որ այս պարագայում կիրառելի չէ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասը, ուստի կարեւոր է համարում, որպեսզի ՀՀ Ազգային ժողովն ուշադրություն դարձնի այս հիմնախնդրին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հանրապետության օրենքի 63, 64 և 69 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Յ**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

4. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը և 118-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող եւ անվավեր:

5. Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, նկատի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խարարելով այդ նորմերի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետով ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2009թ. մարտի 31-ը՝ ՀՀ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձեւով համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**25 նոյեմբերի 2008 թվականի
ՍՊ.Օ-780**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱՊՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ՝ ԲԲՅՈՒԽԵԼՈՒՄ ԵՎ 2008

ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՉԱԺՈՂՈՎԻ ՄԻՋԵՎ «ՊԱՐԵՆԱՅԻՆ

ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» 2007/019-124 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՊՐՈՒԹՅԱՆ և

ՀԱՄԱՅՆՔՆԱԳՐՈՒՄ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան

28 նոյեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալյայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Զ. Դուկասյանի, Հ. Նազարյանի, Ռ. Պապյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի հունիսի 13-ին՝ Բյուսելում և 2008 թվականի օգոստոսի 8-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների հաճանաժողովի միջև «Պարենային ապահովության ծրագիր» 2007/019-124 ֆինանսական համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուստինապիտելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

Համաձայնագիրն ստորագրվել է 2008 թվականի հունիսի 13-ին՝ Բյուստելում եւ 2008 թվականի օգոստոսի 8-ին՝ Երեւանում: Համաձայնագրի նպատակը Եվրոպական համայնքի կողմից Հայաստան-2007. Պարենային անվտանգության ծրագրի (DCI-FOOD/2007/019-124) ֆինանսավորմանն աջակցելն է:

Ըստ համաձայնագրի՝ Ծրագրի բյուջեն կազմում է 3.086.000 եվրո, որից 86.000 եվրոն կօգտագործվի տեխնիկական աջակցության համար, իսկ առավելագույնը 3.000.000 եվրոն՝ բյուջետային օժանդակության համար: Եվրոպական համայնքի ֆինանսական օժանդակությունը պետք է սահմանափակվի համաձայնագրում նշված գումարով:

Համաձայնագրով նախատեսված Ծրագրի նպատակն է աջակցել աղքատության նվազեցման ուղղությամբ կառավարության եւ հասարակության ընդհանուր ջանքերին՝ կայուն տնտեսական աճի եւ զարգացման միջոցով, պահպանել եւ խրանել գյուղատնտեսության ոլորտի բարեփոխումները, հատկապես Եվրոպական հարեւանության քաղաքականությանն անցնելու ընթացքում այդ ոլորտում պետական ծախսերի կառավարման բարելավումները, աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարությանը բարելավելու համար գյուղատնտեսության ոլորտում պետական ծրագրերի եւ ծառայությունների մշակումը, կառավարումը, իրականացումն ու արդյունավետությունը, որոնք ուղղված են պարենային վտանգների նվազեցմանը, մասնավորապես, գյուղատնտեսության նախարարության իրավասությանը պատկանող անասնաբուժության եւ բուսասանիտարական քաղաքականության շրջանակում ռեսուրսների բաշխման եւ գործառնական արդյունավետության բարելավմանը:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է միշտ պարտավորություններ, այդ թվում.

- ապահովել հավասար պայմաններով մասնակցություն աշխատանքների, մատակարարման կամ ծառայությունների պայմանագրերի մրցարքային իրավերին եւ առաջարկների ներկայացմանը Եվրոպական համայնքի անդամ պետությունների բոլոր ֆիզիկական եւ իրավաբանա-

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

կան անձանց համար, ինչպես նաև համագործակցության տվյալ ոլորտը կարգավորող իհմնական ակտերի հատուկ դրույթների համաձայն, շահառու երրորդ երկրների կամ այդ ակտերում հստակորեն նշված որեւէ երրորդ երկրի բոլոր ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար,

- Եվրոպական համայնքի կողմից ֆինանսավորվող գնումների պայմանագրերի եւ դրամաշնորհների նկատմամբ կիրառել ամենանպաստավոր այն հարկային եւ մաքսային պայմանները, որոնք կիրառվում են շահառու պետության հետ հարաբերություններ ունեցող պետությունների կամ զարգացման միջազգային կազմակերպությունների նկատմամբ,

- համապատասխան միջոցներ ձեռնարկել խախտումները, խարդախությունը կանխելու եւ, Եվրոպական համայնքների Հանձնաժողովի պահանջով, սխալմամբ վճարված դրամական միջոցները դատական կարգով վերադարձնելու ուղղությամբ,

- անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել պայմանագրերի կամ դրամաշնորհների տրամադրման ցանկացած փուլում կամ դրանց առնչվող պայմանագրերի իրականացման ընթացքում ակտիվ կամ պասիվ կոռուպցիայի ցանկացած փորձ վերացնելու համար,

- բույլատրել, որպեսզի Եվրոպական համայնքների Հանձնաժողովը, Խարդախության դեմ պայքարի Եվրոպական գրասենյակը եւ Առողջապահության նկատմամբ իրականացնեն փաստաթուղթային ստուգումներ եւ ստուգումներ տեղում՝ համաձայնագրի տեսողության ողջ ընթացքում եւ վերջին վճարումից հետո՝ յոթ տարվա ընթացքում եւ այլն:

Ծրագիրը պետք է իրականացվի համաձայնագրին եւ դրա անբաժանելի մասը հանդիսացող հավելվածներին՝ Ընդհանուր պայմաններին (հավելված I) եւ Տեխնիկական եւ վարչական դրույթներին (հավելված II) համապատասխան:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2008 թվականի հունիսի 13-ին՝ Բրյուսելում եւ 2008 թվականի օգոստոսի 8-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Եվրոպական համայնքների հանձնաժողովի միջև «Պարենային ապահովության ծրագիր» 2007/019-124 ֆինանսական համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**28 նոյեմբերի 2008 թվականի
ՍԴԱ-781**

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԻԶԱՉԳԱՅԻՆ XIV ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՔ

Հոկտեմբերի 1-3-ը Երեւանում անցկացվեց Երեւանյան միջազգային XIV խորհրդաժողովը: Սեմինարի կազմակերպիչներն էին ՀՀ սահմանադրական դատարանը, ՀՀ Ազգային ժողովը, Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով Եվրոպական Հանձնաժողովը (Վենետիկի Հանձնաժողով), Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանսը, «Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության» մասնակցությամբ ու Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության երեւանյան գրասենյակի աջակցությամբ:



XIV խորհրդաժողովի խորագիրն էր՝ «Սահմանադրության գերակայության երաշխավորման գործում ՍԴ-ների եւ խորհրդարանների գործակցության միջազգային փորձը»:

ՀՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում ուր կայացավ խորհրդաժողովը բացման խոսքերով հանդես եկան՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովհաննելի Արքահամայանը, ՀՀ ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանը, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի գլխավոր քարտուղար Զիանի Բուրիքին։ Այնուհետև հրապարակվեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ողջույնի խոսքը։

Խորհրդաժողովի օրվա թեման էր՝ «Սահմանադրության գերակայության ապահովումը որպես իրավական պետությունում սահմանադրական կայունության հիմնական երաշխիք»։ Նիստը նախագահում էր Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի գլխավոր քարտուղար Զիանի Բուրիքին։

Առաջին նիստում գեկուցումներով հանդես եկան՝ Բելգիայի Սենատի նախագահ Արման Դը Դեկերը, Սարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատավոր, պալատի նախագահ Ժոզեֆ Կասադեվալը, ՀՀ ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանը, Վրաստանի ՍԴ նախագահ Գեորգ Պապուաշվիլին։ Զեկուցումների շուրջ եղան հարց ու պատասխաններ, թեմաների քննարկումներ։

Նիստի առաջին ընդմիջմանը կայացավ ՀՀ ՍԴ նախագահ Գ. Հարությունյանի ճեպագրույցը։

Կարճ ընդմիջումից հետո շարունակվեցին գեկուցումները։ Հանդես եկան՝ Լեհաստանի Սենատի հանձնաժողովի նախագահ Պիոտր Զիենտարսկին, Տաջիկստանի ՍԴ նախագահ Մախսկամ Մախմուդովը, Բելառուսի ՍԴ նախագահ Պյոտր Միկլաշենիչը, Չեխիայի պատգամավորների պալատի հանձնաժողովի անդամ Եվա Դունդաչկովան, Ռուսաստանի ՍԴ դատավոր Պետր Ստեցյուկը։ Զեկուցումների շուրջ եղան հարց ու պատասխաններ, քննարկումներ։

Երկրորդ նիստի թեման էր՝ «Արդյունավետ սահմանադրական վերահսկողության իրականացման պառլամենտական երաշխիքները»։

Նիստը նախագահում էր ՀՀ ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանը։

Զեկուցումներով հանդես եկան՝ ՀՀ ԱԺ փոխնախագահ Արեւիկ Պետրոսյանը, Լիտվայի ՍԴ դատավոր Պրանաս Կուցոնիսը, Ռումինիայի ՍԴ նախագահ Վալենտին Պուշկաշ Զոլտանը, Վրաստանի Խորհրդարանի պատգամավոր Պավել Կուրլաշվիլին, Լատվիայի ՍԴ նախագահ Գունար Կուտրիսը, Անդրայի ՍԴ անդամ Միգել Հերերո Դե Մինյոն, Բելառուսի խորհրդարանի մշտական հանձնաժողովի նախագահ Եվգենի Սմիռնովը, Ղազախստանի Խորհրդարանի Սենատի անդամ Իռան Ամիրովը։ Երկրորդ նիստի ավարտին խորհրդաժողովը քննարկեց Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմին-

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ների կոնֆերանսի ներկայացուցիչների մասնակցությամբ Սահմանադրական արդարադատության համաշխարհային խորհրդաժողովի կանոնադրության նախագիծը:

Խորհրդաժողովի հաջորդ օրվա թեման էր՝ «Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները որպես իրավունքի աղբյուր, դրանց դերն օրենքի բացի հաղթահարման գործում»

Երրորդ նիստը նախագահում էր Բելզիայի ներկայացուցիչների պալատի փոխնախագահ Միա Դը Սիսամֆելաերեն:

Զեկուցումներով հանդես եկան՝ Ռուսաստանի ՍԴ փոխնախագահ Օլգա Խոխորյակովան, Մոլդովայի ՍԴ նախագահ Դումիտրո Պուլքերեն, Էստոնիայի ԳԴ դատավոր Պրիհիտ Պիկամաեն, Ալբանիայի ՍԴ դատավոր Ադմիր Շիանզան, Նիդերլանդների ԳԴ դատավոր Օուկար Դե Սավորնին Լոհմանը:

Նիստի առաջին ընդմիջմանը կայացավ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի գլխավոր քարտուղար Ջիանի Բուրիքիոյի մամուլի ասուլիսը: Նախորդ օրը նա պարզեւատրվել էր Հայաստանի Հանրապետության Պատվո շքանշանով՝ Հայաստանի եվրոպական ինտեգրմանը նպաստելու եւ ՀՀ-ում իրավական բարեփոխումների իրականացնան գործում ունեցած ծառայությունների համար:

Այնուհետև խորհրդաժողովում զեկուցումներով հանդես եկան՝ Ալժիրի ՍԽ դատավոր Դինե Բենջեբարան, Մակեդոնիայի ՍԴ դատավոր Նատաշա Գարեր-Դամյանովսկան, ՀՀ ՍԴ անդամ Ֆելիքս Մոխյանը, Բուլղարիայի ՍԴ դատավոր Վասիլ Գոցեևը, Ղրղզստանի ՍԴ դատավոր Աբրամովա Աբրամզապառովը:

Զեկուցումների շուրջ եղան հարց ու պատասխաններ, թեմաների քննարկումներ:

Չորրորդ նիստի թեման էր՝ «Խորհրդարանների եւ սահմանադրական դատարանների գործառնական փոխհարաբերությունների զարգացման եվրոպական արդի միտումները»: Այն նախագահում էր Լատվիայի ՍԴ նախագահ Գունար Կուտրիսը:

Զեկուցումներով հանդես եկան՝ Բելզիայի ներկայացուցիչների պալատի փոխնախագահ Միա Դը Սիսամֆելաերեն, Սերբիայի ԱԺ վարչական հանձնաժողովի նախագահ Նենադ Կոնստանտինովիչը, Նորվեգիայի ԳԴ դատավոր Կարին Բրուգելիուսը, Բունիայի եւ Հերցոգովինայի ՍԴ փոխնախագահ Վալերիա Գալիչը:

Զեկուցումների շուրջ եղած հարց ու պատասխաններից, թեմաների քննարկումներից հետո նախագահողներն ամփոփեցին քննարկումների արդյունքները:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Խորհրդաժողովի պաշտոնական լեզուներն էին՝ հայերենը, անգլերենը, ֆրանսերենը և ռուսերենը:

Միջոցառման մշակութային ծրագրի շրջանակում մասնակիցների համար կազմակերպեցին այցելություններ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մատենադարան, Ազգային պատկերասրահ, Զվարթնոց տաճար:

Օրեր անց ՀՀ ՍԴ հասցեագրված հեռագրերում Խորհրդաժողովի մասնակիցները բարձր գնահատականների էին արժանացրել և շնորհակալանքի խոսքեր հղել թե կազմակերպման և թե օրենսդիր մարմնի հետ այն համատեղ անցկացնելու մտահղացման համար, որը մասնակիցներին հնարավորություն էր ընձեռել բարձրացնելու թենայի քննարկման արդյունավետությունը, տեղեկանալու տարրեր երկրների իրավակիրառական պրակտիկայում առաջացող խոչընդոտներին և փորձի փոխանակման միջոցով օրենսդիր ու սահմանադրական վերահսկողության մարմինների համագործակցությունը ծառայեցնել այդ խոչընդոտների վերացմանը իրավական ճիշտ լուծումներ գտնելու ճանապարհով:

ՀԵՐԹԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԸ GTZ-Ի ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ

Հոկտեմբերի 22-23-ը ՀՀ սահմանադրական դատարանի անդամների եւ աշխատակազմի համար անցկացվեց «Անհատական դիմումի ընթացակարգի կատարելագործումը ՀՀ գործող Սահմանադրության շրջանակներում» խորագրով ՀՀ ՍԴ-ի եւ GTZ-ի համատեղ V սեմինարը՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դաշնային սահմանադրական դատարանի գիտաշխատող, իրավագիտության դոկտոր Ռոբերտ Բառունեի մասնակցությամբ: 1969 թվականից սկսած Գերմանիայի սահմանադրական դատարանն այս ոլորտում մեծ փորձ է կուտակել, եւ պարոն Բառունեն, ՀՀ ՍԴ դատավորներն ու աշխատակազմը քննարկումներն անցկացրին գերմանացիների փորձի եւ ՀՀ ՍԴ գործառույթների շուրջ:

Երկօրյա նիստերի ընթացքում քննարկվեցին «Սահմանադրական դատարանի որոշմամբ վճարի հատուցման՝ դիմումատուի իրավունքի ճանաչումը եւ վճարի հաշվարկումը», «Սահմանադրական դատարանը որպես «կատարողական վարույթի տեր». կատարողական մարմինների մատնանշման եւ դրանց կոնկրետ իրավունքների սահմանման հնարավորությունները». «Վերջնական դատական ակտի վերանայումը կիրառված իրավադրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանելու դեպքում՝ իրավակիրառման ժամանակ հիմնական իրավունքների խախտումը ճանաչելու հիմքով» թեմաները: Ցուրաքանչյուր թեմայի շուրջ գեկուցումները եզրափակվում էին հարց ու պատասխաններով, պարզաբանումներով:

Ողջույնի խոսքերով հանդես եկան՝ Գագիկ Հարությունյանը (ՀՀ ՍԴ նախագահ, իրավագիտության դոկտոր, պլոտինոր), Գրիգոր Մուրադյանը (ՀՀ-ում GTZ-ի ներկայացուցիչ, իրավաբան), Ռոբերտ Բառունեն (Գերմանիայի Սահմանադրական դատարանի գիտաշխատող, իրավագիտության դոկտոր):

Նիստերը վարում էր ՀՀ ՍԴ նախագահ Գ. Հարությունյանը:

Սեմինարի ընդհանուր թեման այսօրվա համար արդիական էր, եւ վերջին տարիներին ՀՀ սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումների հիման վրա գործերի քննության արդյունքում 20-ից ավելի օրենքներ հակասահմանադրական ճանաչելու փաստը արդի իրավական համակարգի վրա ՀՀ ՍԴ-ի ունեցած ակտիվ ներգործության ու նաև այն բանի վկայությունն է, որ օրենսդրական ու համակարգային բարեփոխումներն այլևս հրատապ լուծում պահանջող խնդիրներ են: Պատահական չեն, որ Վենետիկի Հանձնաժողովն էլ առանձնակի ուշադրություն է դարձնում այս հարցերին՝ եվրոպական զարգացումների ընդհանուր չափորոշիչները

հստակեցնելու նպատակով տարեվերջին ծրագրելով քննարկումներ անցկացնել անհատական դիմումների հետ կապված թեմայով: Համակարգային այդ բարեփոխումներին ՀՀ ՍԴ-ի ակտիվ ներգործության վկայություն կդառնա նաև եկող տարվա հոկտեմբերի վերջին տասնօրյակում Երեւանում ՀՀ ՍԴ-ի կողմից կազմակերպելիք միջազգային խոշոր ֆորում՝ մասնակցությամբ Մարդու իրավունքների Եվլուսական դատարանի, Վենետիկի Հանձնաժողովի, GTZ-ի եւ անհատական դիմումների քննության խնդրով շահագրգիռ այլ կազմակերպությունների:

Իր բացման խոսքում ներկայացնելով այս ամենը, Գ. Հարությունյանը հավելեց, թե համակարգը մեզանում մի շարք փոփոխություններով զարգացնելու լուրջ հնարավորություններ կան, սակայն, դեռ մտահոգիչ է մնում սահմանադրական դատարանի որոշումների արդյունավետ իրացման խնդիրը, որը պայմանավորված է նաև նոր հանգամանքների ինստիտուտի գործունեությամբ: ՍԴ-ն արդեն մեկ անգամ իր որոշումով ամբողջությամբ հակասահնադրական ճանաչեց այդ ինստիտուտը, եւ ՀՀ ԱԺ-ն այդ առնչությամբ օրենսդրական էական փոփոխություններ կատարեց: Այսուհեռած, ինստիտուտը շարունակում է անարդյունավետ գործել հատկապես դիմող քաղաքացիների իրավունքների վերականգնման առումով, որի հետեւանքով էլ սահմանադրական դատարանում ստացվող անհատական դիմումները գերակշռող են դառնում:

Երկօրյա համատեղ սեմինարը նոր փորձի յուրացման, անհատական դիմումների ինստիտուտի գործունակությունն առավել արդյունավետ դարձնելու ուղիներ գտնելու միջոց էր, մտքերի փոխանակությամբ, թեմայի խորը վերլուծությամբ ու քննարկումներով նոր առաջարկություններ մշակելու լավ հնարավորություն:

ՀՀ ՍԴ մամուլի ծառայություն



ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

• **Սեպտեմբերի 22-ին** Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանում Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) ներկայացուցության գրասենյակի ղեկավար, դեսպան Սերգեյ Կապինոսին:

Զրույցն ընթացավ ՀՀ սահմանադրական դատարան-ԵԱՀԿ համագործակցության էլ ավելի աշխուժացման եւ առաջիկա անելիքների շուրջ:

• **Նոյեմբերի 5-ին** ՀՀ սահմանադրական դատարանի կողեկտիվը հաճելի անակնկալ էր պատրաստել մեծանուն դերասան Սու Սարգսյանի համար՝ նրա ծննդյան 80-ամյակի առիթով հյուրընկալելով իր հարկի տակ: Այն վարպետին շնորհավորելու, քատրոնում ու կինոյում նրա մարմնավորած դերերի արժեւորման, նրան՝ որպես մշա-

կույթի մեծ գործչի, ժողովրդի ճանաչումն ու սերը վայելող արտիստի մեծարման ցերեկույթ էր, նրա հետ անմիջական շփումի ու երկխոսության բացառիկ հնարավորություն:

Սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը կոլեկտիվի անունից ողջունեց հորելյարին:

- Մենք հպարտ ենք, որ Սու Սարգսյանի ժամանակակիցն ենք, տաղանդաշատ մի դերասանի, ով մեծ հետք է բողել իր բարձրարժեք արվեստով, դերասանական իր հրաշալի խաղով, մարդկային իր կերպարով: Նա իր ժամանակի մեջ երեւույթ է, լեզենդ, եւ մենք հպարտ ենք, որ նրա ժամանակիցն ենք ու այսօր այս գեղեցիկ հնարավորությունն է մեզ ընձեռվել՝ անձամբ շվելու Սու Սարգսյան երեւույթի հետ:

Այնուհետև Սու Սարգսյանին հանձնվեց սահմանադրական դատարանի շնորհավորանքի ուղերձը:

Սու Սարգսյանն իր շնորհակալությունը հայտնեց հանդիպման, զերմ խոսքերի ու վերաբերմունքի համար: «Ուրախ եմ, որ ձեզ հետ եմ, ինձ շատ լավ եմ զգում: Այս հանդիպումն այն փաստի վկայությունն է, որ մեր հասարակությունն իր հետաքրքրությունը չի կորցրել մեր մշակույթի հանդեպ»:

• **Նոյեմբերի 9-ին** ՍԴ նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Սեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Չարլզ Լոնդոնին:

Հյուրի խնդրանքով պարուն Հարությունյանը ծանոթացրեց սահմանադրական բարեփոխումներից հետո ՍԴ-ում անհատական դիմումների հիման վրա քննարկված գործերին, որոնք նկատելիորեն գերակշռող են, եւ որոնց քննության արդյունքում ՀՀ տասնյակից ավելի օրենքներ ճանաչվել են հակասահմանադրական:

Զրուցակիցներն անդրադարձան նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից կազմակերպվող միջոցառումներին, ի մասնավորի՝ Վենետիկի Հանձնաժողովի եւ Սահմանադրական իրավունքի միջազգային ասոցիացիայի հետ համատեղ ավանդաբար անցկացվող երեւանյան միջազգային խորհրդաժողովներին:

Քննարկվեցին երկուստեր հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

• **Նոյեմբերի 11-ին** ՍԴ նախագահ Գ. Հարությունյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիա-

զոր դեսպան Հանս-Յոխեն Շմիդթին: Նորանշանակ դեսպանի այցը ճանաչողական էր, եւ զրույցը հիմնականում ընթացավ երկու երկրների եւ, ի մասնավորի՝ ՀՀ եւ Գերմանիայի սահմանադրական դատարանների միջև հաստատված կապերի ել ավելի ամրապնդման ու համագործակցության խորացման շուրջ: Փաստվեց, որ երկու երկրների ՍԴ-ների համագործակցության արդյունքում լուրջ քայլեր են արվել ներքին հավասարակշռված իրավական համակարգի կատարելագործման ճանապարհին, առանց որի հնարավոր չէ երկրում քաղաքացիական հասարակություն ձեւավորել: Երկուստեր համատեղ գործունեության ծրագիր մշակելու պայմանավորվածություն ձեռք բերվեց:

ՀՀ ՍԴ մասմուլի ծառայություն

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կողեզրիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 01.12.2009 թ.
Դասիչ՝ 77754
Գրաշափը՝ 70x100 1/16
Տպաքանակը՝ 500

**ՀՀ ՍԴ դեղեկագիրը ՀՀ
բարձրագույն որակավորման
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է
այդենախոսությունների արդյունքների
դրագրման համար ընդունելի
պարբերականների ցանկում**